

17104

368.4

P-62

1925

ԱՐՄ.

2-4003a

ՎՐԱՏՏԵՆԻ ԱՐՆՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԳԻ
ՀՐԱՏԱՐԱԿԱՌՅՈՒՆ.

368.4

2-62 ն. Ի. Բիխովսկի

2-4003a

308
2-61


21725

Ի Ն Զ Ե

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ

Գ Ա Ն Ձ Ա Ր Կ Ղ Ը

Վ Ր Ա Տ Տ Ա Ն



№ 21725

Ք Ի Տ Լ Ի Ս

Տպարան Գլխգրաֆուստամարանի, Գանդակի փող., № 3:
1925 թ.

Handwritten signature or mark.

ԻՆՉ Ե ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՂԸ

Վերջին ժամանակները «Կարմիր արշալույս» յերկաթա-ձուլարանի բանվորները ծուլորեն եին հաճախում գործարանի ընդհանուր ժողովները: Հենց վոր աշխատանքը վերջանում էր, բանվորները ձգտում էին դեպի դարբաս և բանկոմն անագին ջանք էր թափում նրանց համոզելու, վոր մնան ժողովի:

Բայց այս ժողովի մասին արդեն, գործարանում մի ամբողջ շաբաթից է վեր զրույցներ եին պտտվում: Լուրերն սկսվեցին այն ուրից, յերբ գործարանում հայտարարություն կպցրին, թե կիրակի ուր կայանալու յե «ընկեր Դանելյանի զեկուցումը ապահովագրական գանձարկղի մասին»:

Գույնզգույն մատիտով գրած հայտարարության մոտ խմբվում էին բանվորներ և տեղի էր ունենում մտքերի փոխանակություն:

— Եդ ի՞նչ ապահովագրական գանձարկղ է — հարցնում է մեկը:

— Յերևի ելի ոռճիկից մի բան պետք է կտրեն — փնթփնթում է ինչ վոր ծերուկ:

— Ե՛հ, չե՛, ի՞նչ «կտրեն», պատասխանում է յերկրորդը — դա յերևի բանվորներին ոգնություն տալու մասին է:

ԿԿԿԿԿ, ա. խ.



— Ի՞նչ ոգնութիւն, ի՞նչ ես խոսում, դա յերեկ չաշխատած որերի մասին ե, տուգանք պիտի առնեն, չեն տեսնում գրած ե «ապահովագրակտն», պետք ե ապահովեն իրենց:

— Իսկ «գանձարկղ» ինչո՞ւ յե գրված:

— Հենց եդ տուգանքն ե ելի, գանձանակ պիտի հավաքեն գործարանի համար:

— Հիմար բան եր ես ասում, տուգանքներն այդ գանձարկղը չեն գնում, այլ պետութեան գանձարկղը: Սա գիտե՞ք ինչ ե, ուղում են հիվանդանոցային գանձարկղ սարքել:

— Դու յել բան ասացիր, բա եդ ի՞նչ «ապահովագրական» ե:

Յե՛վ այսպես ամեն մեկն իր կարծիքն եր հայտնում ամբողջ մի շարաթ, մինչև ժողովի որը: (Թեև գործկոմն ու կոմբընը գիտեին բանի եյութիւնը, սակայն լուծմ եին դիտմամբ, թե «ժողովին կիմանաք»):

**Դանկլյանի գեկու-
ցումը:**

Բանվորական ակումբի հսկայական դահլիճը լեփ լեցուն եր բանվոր-բանվորուհիներով: Աղմուկ, ծիծաղ, հանաք տիրել եին դահլիճը, յերբ գործկոմի նախագահը բեմ դուրս գալով՝ դանդահարեց ե ասաց:

— Ընկերներ խնդրում եմ գրավեք տեղերդ ե լը-
նութիւն պահպանեք: Սուքը պատկանում ե ընկ. Դա-
նկլյանին ապահովագրական գանձարկղի մասին:

Լռութիւն տիրեց: Ընկ. Դանկլյանը մոտենալով սեղանին սկսեց:

Ընկերներ, ասում են, վոր ասեղը բոլորի համար կար ե անում, իսկ ինքը մերկ ֆուտ: Իսկ ինքը մերկ ֆուտ: Իսկ ինքը մերկ ֆուտ: Իսկ ինքը մերկ ֆուտ:

Յե՛թե լավ գիտենք բանվորի դը-
րութիւնը, կը տեսնենք, վոր նրա վիճակն ել նայնն ե, ինչ վոր ասեղինը:

Ի՞նչու լռեցինք պալատներ են շինում, իսկ իրենք ապրում են խոնավ ու կեղտոտ նկուղներում. բանվորները գործում են գեղեցիկ կտորներ, կարում են սիրուն շորեր, իսկ իրենք կեղտոտ ցնցոտիներով են ման գալիս. ինչ վոր կա ստեղծած մարդու համար՝ գեղեցիկ, հարմար ու դուրեկան, բոլորը բանվորի կոշտ ձեռքերի գործն ե, բայց դրանից վոչ թե մենք ենք ոգտվում, այլ ուրիշները, վորոնք վոչ ցանում են, վոչ հնձում — գործատերերն ու կապիտալիստները:

Յե՛թե մենք բանվորներս ու ծառայողներս խոսկ կապեինք ու ամբողջ աշխարհում մի գեղեցիկ որ գործադուլ հայտարարեինք — ամբողջ աշխարհի կյանքը կընդհատվեր. քաղաքները մութի մեջ կը խորասուզվեին, ամեն ինչ կանդ կառներ — ճանապարհները, փոստը, հեռագիրը, գործարանները, հիվանդանոցները, խոհանոցները, ճաշարանները, ջրմուղները, գրասենյակներն ու հիֆնարկութիւնները. մի խոսքով այն բոլորը՝ առանց վորի ներկա մարդկային հասարակութիւնը չի կարող ապրել:

Յե՛վ գործադուլ հայտարարելուց հետոյ երկու շա-
բաթվա ընթացքում, կամ մեր բոլոր պահանջները — աս-
մենախոշոր ու վայրի պահանջները կը բավարարվեին, կամ թե՛ մարդկութիւնը կը վոճնանար առանց լույսի,

Նրի և ոտելիքի, ցրտից ու սովից, հիվանդութիւններէից ու զրկանքներէից:

Սենք, աշխատավորներս, յերկրիս յերեսին կենդանի կյանքի աղբյուրն ենք, մեր ուսերի վրա յենք տանում մարդկային կուլտուրական աշխարհը, մենք ենք պահպանում աշխարհը կործանումից, մեր ձեռքին է մարդկային հասարակութեան բախտը:

— Ճիշտ է — լավեցին ձայներ զանազան կողմերից:

— Այո ճիշտ է — կրկնեց զեկուցողը և շարունակեց: — Բայց տեսնենք ի՞նչպես է ապրում կյանքի տերն ու ստեղծագործողը, մարդկութիւնը անողն ու ծարավ հագեցնողը: Ի՞նչպիսի վարձատրութիւնն է ստանում բանվորը «կալտարական» մարդկութիւնից, կապիտալիստական հասարակութիւնից, իր աշխատանքի և ծառայութեան համար:

— Վնչ մի:

Աւելացավ արձի դերը բանվորի կայրում:

Մեր ամբողջ կյանքը տաժանելի կռիվ է չոր հացի կտորի համար: Մեր ամբողջ հարստութիւնը՝ մեր կոշտ ձեռքերն են և աչքն, ինչ վոր մենք ստանում ենք — մեր աշխատավարձը: Յեթե բանվորն աշխատավարձ ունի՝ ամեն ինչ, քիչ թե շատ, լավ է գրնում. ինքն էլ և կուշտ ու հագնված, ընտանիքն էլ մի կտոր հաց ունի և ապրելու անկյուն: Բայց հենց վոր բանվորը աշխատավարձից զրկվեց — պրծավ: Նրա ամբողջ կյանքը մի անգամից փոխվում է, տան յեղած չեղածը ծախսխորվում:

Տունը դատարկ, փայտ չըկա, առնելու միջոց չըկա:

Ընտանիքը կիսաքաղց, կամ բոլորովին քաղցած դուրս թան մեջ է ընկնում: Պարտքերը ծանրանում յեն բանվորի վզին, սկսվում են տարածայնութիւններ: Կինը, վորի հետ բանվորն ապրում էր խաղաղ, քաղցից դառնում է կովարար ու շար. յերեսաները ման են գալիս պատառոտված, ցնցոտիներով, կեղտոտ (սով է մտածում մաքրութեան մասին, յերբ փորը դատարկ է): Մի խոսքով ամեն բան վատ է գնում, վոչ ընտանեկան և վոչ անձնական բարորութիւն, ամեն ինչ քանդվում է:

Աշխատավարձ կորցնելու պատճառներ շատ կան, պատճառներ, վորոնք գիշատիչ թռչունների պես պատվում են բանվոր մարդու գլխին ամեն բողբոջ պատրաստ կտցահարելու և բզիկ-բզիկ անելու: Նրանք միշտ բանվորի հետ են — տան շեմքին, գործարանի դարբասի մոտ, դազդյասի առջև, ամեն տեղ, ուր նա գնալու լինի:

Աւելացավ արձի կորցնելու պատճառներ:

Պատճառները շատ են: Վերցնենք ամենից գլխավորը, որին ազդում են հաճախ հյուր յեկողը — հիվանդութիւնը:

Հիվանդութիւն:

Ասենք, թե գործարանում աշխատում էր մի ինչ վոր Յեղոյան և հանկարծ հիվանդացավ, մրսեց, թե ով գիտի ի՞նչ յեղավ. հիվանդութիւնը մութ բան է:

Մեր Յեղոյանը դիմանում է, չի հետանում գործից, մտածելով, թե «գուցե անցնի»:

Բայց տես անցնում է մի ուր, յերկու ուր, իսկ հիվանդութիւնը վոչ թե պակասում, այլ սաստկանում է, մանավանդ յերեկոները: Գլուխը արձիճի պես ծան-

բանում և, մարմինը ցավում, շնչառութիւնը դժվարանում:

Յեւ անա, մի գեղեցիկ որ ել լսվում և գործարանի շվոյը և Յեղոյանին գործի կանչում, իսկ նա տաքութեան մեջ պառկած՝ զտանցում և, գործի գլուխ չունի: Հիվանդութիւնը հասարակներէից չէ, թոքերի բորբոքում ունի:

Յեթն հիվանդութիւնն յերկար տեւու լինի, Յեղոյանի գործը շատ վատ և դնալու. փող չունի, ստանալու ել հույս չը կա, տան քրեհը վճարված չէ, ուտելիք չը կա: Ստիպված պարտքի տակ և ընկնում մեր Յեղոյանը, չքավորութիւնը ձեռնում և նրա դուռը: Ո՞վ մեզանից չը գիտի այդ գրութիւնը:

Ճիշտ և, միայն բանվորները չեն, վոր հիվանդանում են. այդ բանը պատահում և և հարուստներին, միայն թե կապիտալիստի մոտ հիվանդութիւնը գալիս և մենակ, իսկ մեր բանվորի մոտ խմբովին: Նա իր հետ բերում և հոգսեր, չքավորութիւն, սով, ցուրտ: Ձե՛ վոր գործարանաւորը հիվանդութիւնը վոճչով չի ազդում նրա ընտանիքի, կամ հենց իր գրութեան վրա: Նրա գործարանը առաջվա պես ոգուտ և բերում, ընտանիքը ուտում, խմում ու հագնվում: Բայց բանվորի համար հիվանդութիւնը տանջանքի մի ամբողջ շարք և: Այս մեկ:

Բացի դրանից, հիվանդութիւնը բանվորին ավելի յե «սիրում»: Հայանի յե, վոր բանվորներն ավելի հաճախ են հիվանդանում, քան թե հարուստները: Վերցնենք, որինակ, թոքախտը: Ո՞վ և ամենից շատ հիվանդանում թոքախտով, իհարկե բանվորները և մանավանդ նրանք, վորնք աշխատում են փոշու մեջ: Փաշին անց-

նում և ու գրգուտ թոքերը և հիվանդացնում: Իսկ հիվանդ թոքերը շուտ են վարակվում և հիվանդութիւնն էլ շուտ և տարածվում նրանց մեջ:

Գերմանական բժիշկները հաշվել են, վոր յեթե աշխատանքը փոշոտ տեղում չե կատարվում, թոքախտով հիվանդանում և հազարից 24 հոգի, իսկ ծխախոտի գործով պարապողներից հիվանդանում են հազարից 85 հոգի, այսինքն յերեք անգամ ավելի քան առաջինները:

Նույն գերմանական բժիշկները հաշվել են, վոր ամսական 800—900 ուղբլի (խաղաղ ժամանակվա փողով) ստացողների մեջ 1000-ից միայն յերկուսն են տառապում թոքախտից, իսկ 40—45 ուղբլի ստացողների մեջ 1000 մարդուց 7 են հիվանդանում թոքախտով, ուրեմն ելի յերեք ու կես անգամ ավելի: Անգլիական բժիշկները հաշվել են, վոր հանքային բանվորները թոքախտով հիվանդանում են քահանանաններից 14 անգամ ավելի, փաստաբաններից 9 անգամ: (Տես. բժ. Ն. Ա. Վիգորշիկի «Վիճակագրական տեղեկատու» գիրքը):

Ինչից և այս բոլորը: Պարզ և ինչից: Հարուստներն ապրում են տաք ու չոր բնակարաններում, լավ են կերակրվում, տաք ու տարվա յեղանակի համեմատ հագնվում, չեն աշխատում փոշում, նույնպես և ցրտում, քամու դեմ, քրտնած: Այդ պատճառով էլ նրանք ավելի առողջ են: Հիվանդութիւնն այնպես հեշտ չէ հազթում նրանց, ինչպես մերոնց:

Ի՞նչպես պաշտպանվի վոսկրացավից հանքերում աշխատող բանվորը, յերը նա ստիպված և իր ամբողջ կյանքն անց կացնել խոնավ հողում: Ի՞նչպես խուստփի թոքերի հիվանդութիւնից ծխախոտի գործարա-

նում աշխատող, կամ տպագրող բանվորը, յերբ նա ստիպված է ամբողջ որը շնչել թունավոր արճիճի կամ ծխախոտի փոշու մեջ:

Բանվոր մարդուն շրջապատող բոլոր պայմանները — թե գործը, թե բնակարանը, թե ուտելիքը, թե հագուստը — այնպես են դասավորված, վոր նույստում են հիվանդություններին: Հիվանդությունը բանվորի սովորական ուղեկիցն է, ամենից շատ նրա տուն հաճախող հյուրը...

Հաճախեցանություն: Վերջնենք մի ուրիշ հյուր, վոր նույնպես շատ ուշ-ուշ չի գալիս բանվորի մոտ — հաշմանդամ ությունը:

Մի ինչ վոր Պետրոսյան մեքենայի մոտ աշխատում է: Տասնյակ մեծ ու փոքր անիվներ պտտվում են նրա շուրջը, փոկերը նրա գլխին ձգվում են անվերջ ժապավեններով, գլանները դառում, ամեն ինչ շառաչում է, դղրդում, ճոճոռում, թշխշում, խրացնում և անդադար սպանում. «Ձգուշացիր, էյ, զգուշացիր»: Բայց մարդկային ուշադրությունն էլ սահման ունի: Վերջի վերջո նա բխանում է, և մանավանդ ծանր աշխատանքից ու անընդհատ լուրումից հոգնում:

Հանկարծ մի ինչ վոր պատճառով չի կարողանում իրեն պահել մեր Պետրոսյանը, ինչ վոր անզգուշ շարժում և մեքենան ճոճոցով ձիգ է տալի շորից. քաշում ու խփում ցավադին: Պետրոսյանի աչքերը մթնում են, ուշքը գնում...

Շուտով ցավից զարթնում է: Շուրջը աղմուկ, իրարացում. «Պատգարակ, պատգարակ, պատգարակ բերեք»:

Մի քանի բուպեից հետո, արնաշաղաղ ու մեռելի պես գունատ մեր Պետրոսյանին, պատգարակի վրա պառկեցրած, տանում են հիվանդանոց: Անհանգիստ հարցերին պատասխանում են. «Դժբախտություն պատահեց, բանվորը վնասվեց»...

Շուտով սրա տանն էլ, ինչպես առաջին դեպքում, սկսվում է կարիք, սով, հոգսեր... Միևնույն բանը միայն մի տարբերություն — Յեղոյանը կարողանա ու մի կերպ վտարի կը կանգնի, իսկ հաշմանդամ Պետրոսյանը՝ այդ հույսից էլ զուրկ է: Վտարից կամ ձեռքից գրկվածին ո՞վ գործ կըտա:

Իսկ գիտե՞ք, ընկերներ, թե ամեն տարի քանի այգպիսիներն են հաշմանդամ դառնում աշխարհիս յերեսին:

Արխանգելսկի, Կիևի, Ռոբեստայի, Լենինգրադի, Մերձբալտյան և հյուսիս-արևմտյան շրջանների գործարաններում և արհեստանոցներում 1912 թվին 803 հազար բանվոր եր աշխատում, իսկ նույն թվին, զբժրախաղեպքերը, այդ ձեռնարկություններում համում են 53 հազար ու կեսի, այսինքն 1000 բանվորից 66-ը մեքենաներից հաշմանդամ է դարձել:

Վոլգայի շրջանի գործարաններում 1915 թվին աշխատում եր 111 հազար ու կես բանվոր, իսկ զժբախտ դեպքերը միևնույն թվին կազմում են 7.900, այսինքն 1.000 բանվորից 71-ը հաշմանդամ է դարձել:

Յեվ այսպես տասնյակ հազարներով մարդիկ այլանդակվում են վոչ թե միայն Ռուսաստանում, ուր գործարաններն ինքնակալության ժամանակ վատ են կարգավորված (վորովհետև գործարանատերերն իրենց գործարանները շինում են իրենց ուղածի պես, միայն

թե ծախսերը քիչ լինեն), այլ և արտասահմանում, ուր գործարանատեղերին ստիպում եին դժբախտություններ կանխող միջոցներ ձեռք առնել:

Անգլիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Ինգլիայում և Շվեյցարիայում ամեն տարի վստավում են մեկ ու կես միլլիոնից ավելի բանվորներ, վորոնցից 16 հազարը մահացու կերպով: 25 տարվա ընթացքում միայն Պրուսիայում (1886 թվից մինչև 1911 թիվը) գործարաններում վստաված և մոտ 11 միլլիոն բանվոր: Հաշմանդամների չը լաված ահագին բանակ և աշխարհ հանված՝ առանց ձեռքի, առանց վոտքի, կույր, խուլ և անթիվ այրիներ ու վորրեր:

Տարեցտարի աճում և ու աճում միջազգային այդ բանակը՝ հաշմանդամ Ֆեղոյանների, Պետրոսյանների և հաշվից հանվածների թիվը, վորոնք զբիվել են բանվորի կյանքում ամենից նշանավոր միջոցից — աշխատավարձից:

Մի ուրիշ հյուր ել կա բանվորի կյանքում — գործազրկությունը:

Գործազրկություն: Աշխատում և Սերգոն գործարանում. հանկարծ նրան զրատեսչյան են կանչում:

- Ի՞նչու յեք կանչել ինձ:
- Կանչել ենք, վոր հաշիվդ ստանաս:
- Ի՞նչ պատճառով:
- Առանց պատճառի: Գործ չըկա, կրճատում ենք արդյունաբերությունը:
- Անհասկանալի բան — մարդն ատողջ և, ունի

ձեռք, վոտք, և՛ ցանկանում և աշխատել, և՛ ընդունակ և, բայց չի կարող, գործ չեն տալիս...

Սկզբում դարդ չի անում. աշխարհս հո չի քանդվել, յեզը վոր լինի՝ լուծ միշտ ել կը ճարվի: Բայց արի աես, վոր չի լինում — մտնոմ ես մի գործարան — չեն ուզում քեզ, համնում ես մյուսին՝ գործ չկա:

Գնում ես աշխատանքի բորսան, այնտեղ ել քեզ պես հաղարները կան, հերթի յին սպասում, վոր իրենց ուժը ծախեն, բայց ուզող չկա...

Իսկ տանը՞, տանը հին, ծանոթ պատկեր: Կինդ սև ամպի պես մոռալ, յերեխաներդ քաղցած, սենյակդ ցուրտ, փող չկա... Միայն մի միտք ծակում և ուղեղդ — վճրտեղ գործ գտնեմ, ի՞նչպես փող ճարեմ, ի՞նչ անեմ...

Դահլիճը լուռ և: Մարդիկ նստած են ժտածկոտ և նրանցից շատերի աչքի առջև ինչպես կիսոյում հաջորդում են միմխանց պատկերներ, վոր այնքան պարզ ու սրտալի նկարում և նրանց առջև Դանեկյանը. Ամեն մեկը մտածում և. «Իսկ և իսկ այն, ինչ վոր ինձ եր պատահում, յերբ անդործ եի մնում»:

Զեկուցողը մի կում ջուր խմեց ու շարունակեց: Վրցցենք մի ուրիշ դեպք, վորը հարուստներին ուրախացնում և, իսկ բանվորունուն և ուրախացնում և դարդ բերում — Ծննդաբերություն:

Ծննդաբերություն: Շատ ժամանակ և անցել այն րից, յերբ արհեստանոցներում և գործարաններում միայն տղամարդիկ եին աշխատում: Արհեստանոցներում ու գործարաններում հիմա կանանց

թիվը որըստորե աճում է: Ուրինակ, Անգլիայում 1915 թվին այն գործարաններում, վորոնք աշխատում էին ինքնապաշտպանութան համար, ընդամենը 140 հազար կին էր աշխատում, իսկ 1917 թվին նոյն գործարաններում աշխատում էր 700 հազար կին, այսինքն 5 անգամ ավելի:

Գերմանիայում 1917 թվին հիվանդանոցային գանձարկղներին մասնակցող կանանց թիվը ավելի շատ էր, քան թե տղամարդկանց: (Ինչպես հայտնի յե հիվանդանոցային գանձարկղներին մասնակցում են միայն բանվորներն ու ծառայողները): Ռուսաստանում նոյնպես գործարաններում ու արհեստանոցներում կանանց թիվը տարեց տարի աճում է. այսպես 1913 թվին գործարաններում աշխատում էր մեկ միլիոն 363 հազար տղամարդ (69%) և 603 հազար կին (31%), իսկ 1917 թվին Ռուսաստանում (առանց Լեհաստանի և Լատվիայի) աշխատում էր մեկ միլիոն 255 հազար տղամարդ (60%) և 840 հազար կին (40%):

Ահա այդ հարյուր հազարավոր կանանցից մեկը, Սիրանը, զգում է, վոր շուտով մայր պետք է դառնա: Կարծես թե մտածածուքի ու տխրելու բան չըկա: Ընդհակառակը, պետք է ուրախանալ, յերեխա պետք է լինի, ջանել հասակում զվարճութուն, իսկ ծերության ժամանակ՝ միթիթարութուն ու նեցուկ:

Բայց մեր Սիրանը չի ուրախանում, այլ մտածում, վոր թե հղիութունը և թե ծննդաբերութունը յերկար ժամանակ զրկելու յեն նրան աշխատելու հնարավորութունից և աշխատավարձից:

Բժիշկներն ասում են, վոր հղի կանանց անհրա-

ժեշտ է թարմ ու մաքուր ոդ, իսկ Սիրանը արհեստանոցում խանձ ու մուր է շնչում:

Բժիշկները խիստ, շատ խիստ արգելում են հղիներին արազ շարժումներ, խորհուրդ են տալիս թեթև դրոսանքներ կատարել, չը հոգնել, իսկ մեր Սիրանն արհեստանոցում կրում է մի քանի փթանոց ծանրութուններ և յերեկոյան, հոգնածութունից հազիվ է վտաքի կանգնում:

Սիրանին անհրաժեշտ է լավ սնունդ, վորպեսզի ուժ հավաքի ինքը և ուժ տա յերեխային արգանդում, իսկ նա ուտում է ինչ պատահի և մեծ մասամբ ցամաք: Որեցոր նրա համար աշխատանքը դժվարանում է: Հարկավոր է մի առժամանակ թողնել արհեստանոցը, բայց ինչպես թողնի գործը: Չե՞ վոր ուտել և պետք, մի կերպ ապրել: Ո՞վ կը պահի նրան: Չե՞ վոր հացն ինքն իրեն չի գալիս, ինչպես սուածն է ասում: Աշխատիլ ու կեր: Յեվ աշխատում է մեր Սիրանը, վերջին ուժերն է թափում, մինչև վերջին որը, քիչ է մնում հենց աշխատելիս ծնի յերեխային:

Վերջապես հասնում է ծննդաբերության ժամը և Սիրանն ուզի չուզի պետք է թողնի աշխատանքը: Նոր ծախսեր են պետք, նոր հոգսեր, վորոնք հանգիստ չեն թողնում և քաշում, տանում են վատառողջ Սիրանին դեպի արհեստանոց: Նույն կարիքը պոկում է Սիրանի կրծքից յերեխային: Ինչ կերակրել, ծիծ տալ, ժամանակ չը կա: Աշխատանքի ժամանակ արհեստանոցից հեռանալ չի կարելի. վարպետը վոր տեսնի՝ դուրս կանի ու բոլորովին կը զրկի մի կտոր հացից: Յերեխային տատը կամ մեծ քույրը կերակրում են ինչպես պատահի՝ ճաշով, կակուղ հացով: Խեղճի բերանն են կոխում ու-

տինս կեղտոտ ծծակը, վոր չի ճչա (իսկ խղճուկը հենց այդ ծծակից է, վոր լաց է լինում):

Սրա հետեանքով բանվորական ընտանիքներում յերեխաները կոտորվում են ճանճերի պես: Բանվոր ընտանիքների նորածին յերեխաների 100-ից մնում է միայն մոտ կեսը, մյուս կեսը գնում է մյուս աշխարհ, դեռ չապրած:

Բրեմեն քաղաքում (Գերմանեայում) գիտնականները հաշվել են, վոր 1000 յերեխայից, հարուստ ընտանիքներում, ընածին թուլությունից մինչև մեկ տարեկան հասակը, 19-ն են մեռնում, իսկ աղքատ ընտանիքներում՝ 49-ը: (Բնածին թուլությունն առաջ է գալիս գլխավորապես նրանից, վոր հղի ժամանակ մայրերը վատ են սնվում, հակաառողջապահական կյանք են վարում, հոգնում են և այլն): Նույն Բրեմենում ուժասպառությունից ու ստամոքսի հիվանդությունից (վատ սնունդ և արհեստական կերակրում) մեռել են հազար հարուստի յերեխայից 6-ը՝ մեկ տարեկան հասակում, իսկ աղքատի յերեխաներ՝ 1000-ից 92-ը: Թոքախտից հարուստ յերեխաները մեռնում են հազարից 2-ը, իսկ աղքատ՝ 12-ը:

Ձարմանալու բան չը կա. միթե կարող է յերեխան ապրել, յերբ համարյա առաջին ուրից, կարծես դիտմամբ, ամեն բան այնպես է դասավորվում, վոր յերեխան մեռնի: Նրան ողի պես անհրաժեշտ է մոր կաթը, իսկ նրան կերակրում են ուտինս ծծակով, ծամած հացով, ճաշով. նրան պետք է մոր քնքուշ խնամքը, իսկ նա ժամերով պառկած է հիվանդ, կեղտոտված, առանց վորեհե խնամքի, արևի ճարագայթին կարոտ, առանց մի պատառ մաքուր ողի:

Ավելի շուտ գարմանիլին այն է, վոր չը նայած այդ բոլորին, մեզանից վոմանք բախտ են ունենում ազատվելու ու ծերության համակու:

Մնա մի պատճառ էլ աշխատավարձից զրկվելու՝ ծերություն:

Լինում է չի լինում մի մարդ. նա ամբողջ կյանքը աշխատանքով է անց կացնում. աշխատում է, աշխատում ու մաշվում: Ել աշխատելու ուժ չը կա:


Բանի ջահել է, առողջ ու ուժեղ, նրան պահում են գործարանում, նույնիսկ գնահատում, բայց հենց վոր ծերանում է, վոնդնում են փողոց: Չե՞ վոր բանվորը թանգարժեք մեքենա չէ. գործատեքը մեքենայի մասին մտածում է, ստիպում է մաքրել, պահպանել ու նորոգել: Մեքենան կատակ բան չէ, փող արժե տիրոջը: Իսկ կենդանի մարդ — մեքենայի մասին ի՞նչ մտածել է պետք: Կը դրի Աշխատանքի Բորսան ու թեկուղ հազար նոր բանվոր կուզարկեն — թարմ, ուժեղ, ամուր...

Իսկ այդ մաշվածը՝ բոլորովին անպետք, ծեր, հաշմանդամը, թող քաբը գա դեպի տուն, ուր նրան սպասում են անծայր կարիքը, սովը, չբավորությունը, առանց հույսի փոքրիկ նշույլի անգամ:

Վերցնենք այրիությունն ու Ելեիությունն յն վորությունն:

Առաջին հայացքից մարդու թրվում է, թե մահը կույր է, տանում է ու պատահի, ում մահվան ժամը հասել է, վոր չվոր չի խղճում: Վոր աղքատ է շոկում, վոր հարուստ, միատեսակ հնձում է բոլորին:

29319-6



Բայց յերբ ուշադիր դիտում ես մահի «աշխատանքը», տեսնում ես, վոր նա յել, հիվանդության պես մեր բանվորին և «սիրում»:

Նույն Բրեմեն քաղաքում գիտնականները հաշվել են ու իմացել, վոր 1911 թվին հարուստ մարդկանց 1000-ից 7-ն են մեռել, միջակ ավրուստի տեր մարդկանց 1000-ից՝ 10-ը, իսկ աղքատ մարդկանցից՝ 20-ը: Դուրս և գալիս, վոր չքավոր մարդիկ յերեք անգամ ավելի յեն մեռնում, քան թե հարուստները:

Նույնպիսի հաշիվներ են արվել 1900 թվից մինչև 1902 թիվը Անգլիայում և ստացվել և նույնը: Սև աշխատանքի բանվորները մեռնում են յերեք անգամ ավելի, քան աստիճանավորներն ու վաճառականները և չորս անգամ ավելի, քան քահանաները:

Այս բանն առաջ և դալիս վոչ թե նրանից, վոր յերկնայիններն ավելի մեր բանվորին են սիրում, քան հարուստներին ու տանում մեզ իրենց մոտ, այլ նրանից, վոր դարզը, հոգսը, կիսաքաղց կյանքը, մաշող աշխատանքը քայքայում են բանվորի առողջութունը և նրան գերեզման հասցնում վաղաժամ:

«Բանվորը մեռավ»: Այս յերկու կարճ բառերը իրենց մեջ պարունակում են դարդի ու արցունքի մի ամբողջ ծով:

Յեթե բանվորը մեռավ, նշանակում և, վոր մեռավ վոչ միայն մոտիկ, սիրելի հայրը և ամուսինը, այլ մեռավ մի մարդ, վորի ընտանիքն ապրում և ընրա աշխատավարձով: Մեռավ ընտանիքի դիտավոր և, հաճախ, միակ կերակրողը, միակ հենարանը:

Անսպասելի դժբախտությունից շժմած՝ հանգուցյալի կինը դիմում և գործարանատիրոջը, հանգուցյալի

ընկերներին և ոգնություն խնդրում թե իր և թե յերեխաների համար: Բայց գործարանատիրոջ չի վերաբերում այդ բանը («Խնչո՞ւ բազմացրիք»), իսկ ընկերներն իրենք անճար ու չքավոր, ինչո՞վ կարող են նրան ոգնել: Շատ շատ իրենց մեջ փող հավաքեն և մի քանի խղճուկ կոպեկ տան...

Ընտանիքը մատնվում և սովի, ցրտի ու անծայր կարիքի, վորոնք այնքան ևլ չեին նեղում հանգուցյալի կենդանի յեղած ժամանակ...

Ահա, ընկերներ, ի՞րչպես և ապրում բանվորը, ահա թե ինչ և տալիս նրան կապիտալիստական հասարակությունը:

Մենք, բանվորներս, շատ կրեցինք այդ կարիքն ու համբերեցինք, լուսթյամբ տարանք մեր անապահով հյանքը, միտիթարվելով, թե այս կյանքում վարած աշխատավոր ու ազնիվ կյանքը աստվածները կը վարձատրեն մյուս աշխարհում: Բայց վերջիվերջո մենք հասկացանք, վոր աստվածների վարձատրություն ասածները հեքիաթներ են, վորոնցով հարուստներն ու նրանց սպասավոր տերտերները, ուրբիները, մոլլաները և այլ «սուրբ» միաբանությունը, խաբւում են մեզ, հիմարներիս և վոր «վոչ վոք չի բերի մեզ փրկություն, վոչ աստված, հերոսն ու արքան, այլ ձեռք կը բերենք ազատություն մեր իսկ ձեռքերով սեփական»:

Այդ բոլորը հասկանալուց հետո, բանվորներն ըկեցին կոխվ մղել իսկական կյանքի համար, այստեղ, մեղսավոր յերկրի վրա, առաջարկելով հարուստներին և

իրենց սուրբ բարեկամներին ուղևորվեն մյուս աշխարհ մխիթարութեամբ ստանալու:

Բայց բանվորները մի անգամից չը հասկացան այս բանը, այլ աստիճանաբար:

Սկզբում նրանք փորձեցին ապահովել իրենց սե որվա համար և ամեն մեկն ել իրեն համար: Բայց զբանից բան դուրս չեկավ: Կապիտալիստներն այնքան քիչ են վճարում բանվորներին, վոր խնայողութեան մասին խոսեցն ավելորդ ե:

Հետագայում բանվորներն յեկան այն մտքի, վոր կարող են իրենց ապահովել, աշխատավարձից զրկվելու դեպքերում, կազմակերպելով փոխադարձ ոգնութեան ընկերութեաններ, «ապահովագրելով իրենց» (ինչպես ապահովագրում են տները հրդեհից) հիվանդութեանից, անդորձութեանից և այլն: Այդ ընկերութեաններն անգամավաճարներ են հավաքում իրենց անդամներին և ստացվող գումարներից նպաստ տալիս կարիքավորներին, աշխատավարձից զրկվածներին:

Բայց շուտով բանվորները փորձով համոզվեցին, վոր միայն իրենց վճարներով հեռու չեն գնա: Այդ ընկերութեաններին անգամ եին զրկում միայն բարձր աշխատավարձ ստացողները, իսկ չքավոր մասը չեղ կարողանում բարձր անդամավճար տալ: Այսպիսով հենց նրանք եին դուրս մնում, վորոնք ավելի կարիք ունեին հասարակական ոգնութեան և ծանր որերին վոչ մի տեղից կոպեկ չեին ստանում:

Այն ժամանակ բանվորներն աստիճանաբար յեկան այն եզրակացութեան, վոր առանց պետական ապահովագրման ցավ չի փարատվի (այսինքն առանց բանվորի ապահովման ի հաշիվ գործատերերի ու պետութեան):

«Մենք ձեզ համար ենք աշխատում, ասացին բանվորները կապիտալիստներին — ձեր գործարաններում ենք կորցնում մեր ուժը, դուք եք ոգտվում մեր աշխատանքից, այդ պատճառով ել դուք պետք ե ապահովեք մղե, յերբ մենք ել չենք կարողանում աշխատել, յերբ մենք կորցնում ենք մեր աշխատավարձը»:

Իհարկե, բուրժուազիան իսկույն չը դիջեց և չը կատարեց բանվոր դասակարգի այդ արդար պահանջը: Այդ կռիվը դեռ մինչև հիմա յել շարունակվում ե Արևմտյան Յեվրոպայում և ուրիշ բուրժուական յերկրներում, ուր բանվորները դեռ ամեն տեղ չեն ստանում ապահովութեամբ, աշխատավարձը կորցնելու դեպքերում:

**Ռուսվարենի պայտա-
րը Ռուսաստանում:**

Մոտավորապես նույնն եր կատարվում և Ռուսաստանում: Մինչև 1903 թիվը, բանվորներն աշ-

խատավարձից զրկվելիս, բախտի բերմունքին եին յենթարկվում և շատ հաճախ, ստիպված եին վողորմութեամբ յանդրել: 1903 թիվին բանվորներին հաջողվեց միապետութեանից իլիկ մի որենք, վորի հիման վրա գործատերերը պատասխանատու յեին հանդիսանուս բանվորին հասած դժբախտ դեպքերի համար: Այդ որենքի համաձայն, յեթե բանվորը միտավում եր գործարանում, գործարանատերը պարտավոր եր վճարել նրան աշխատավարձի կեսը մինչև նրա առողջանալը, իսկ հետո՝ յեթե բանվորը հաճմանդամ եր դառնում, իրավունք ուներ դատարանի միջոցով գործատերերից փորիկ կենսաթոշակ ստանալու:

Պարզ ե ,վոր բանվորների համար սա մի մեծ բան չեք: Գործադուլների ժամանակ բանվորներն սկսեցին

պետութիւնից պահանջել, վոր աշխատավարձը կոր-
ցնելու բոլոր դեպքերում պետութիւնն ու գործարա-
նատերը լիովին ապահովեն բանվորներին:

1904 թվին, յերբ բարձրանում է բանվորական
գործադուլների ալիքը ամբողջ Ռուսաստանում և հա-
մարյա հասնում է կայսեր գահին, Նիկոլայ 2-ը, բան-
վորներին խաղաղացնելու նպատակով հատուկ հրաման
և արձակում, վորով բանվորներին խոստանում է «խը-
նամք տանել և պետական ապահովագրութիւն սահ-
մանել»: Բայց այդ խնամքը, յերևում է, շատ չէր ան-
հանգստացնում կայսեր սիրտը: Նա շատ չէր շտապում
իր խոստումը կատարելու: Ամբողջ ութը տարի այդ
խոստումը մնաց զանազան գրասենյակների, հանձնա-
ժողովների ու հիմնարկութիւնների մեջ: Յեւ միայն 1912
թվի հունիսի 23-ին յերկու որենք հրատարակվեց մեկը
բանվորներին՝ հիվանդութեան դեպքում ապահովելու
(հիվանդանոցային գանձարկղների մասին) և մյուսը՝
գժբախտ դեպքերում ապահովագրելու մասին:

Յերեկ դուք հիշում էք, ընկեր-
ներ, այդ որենքները և գիտեք,
միապետության օրով: թե ինչպէս եին գժգոհ բանվոր-
ները: Նիկոլան հունիսի 23-ի ո-
րենքով շատ բան չարեց մեզ համար:

Մենք պահանջում եինք ապահովութիւն աշխա-
տավարձը կորցնելու բոլոր դեպքերի համար (հիվան-
դութեան, ծննդաբերութեան, հաշմանդամութեան, ին-
վալիդութեան, գործազրկութեան, այրիութեան և վոր-
ութեան դեպքերում), իսկ կայսեր որենքները մեզ ա-
պահովում եին միայն հիվանդութեան, ծննդաբերու-

թեան և հաշմանդամութեան դեպքերում: Ինչ վերա-
բերվում է գործազրկութեան, ինվալիդութեան, ծնու-
թեան, այրիութեան ու վորբութեան, բանվորներն ու
նրանց ընտանիքներն առաջվա պէս վոչ մի ոգնութիւն
չեին ստանում:

Մենք պահանջում եինք, առանց բացառութեան,
բոլոր բանվորների ու ծառայողների ապահովում, բո-
լոր այն մարդկանց, վորոնք վարձով են աշխատում: Իսկ
Նիկոլան բանվորների ավելի նեղափոխական մասը հան-
գստացնելու, «ոեխները փակելու» նպատակով, արձա-
կեց իր որենքը, վորը վերաբերեց միայն գործարանա-
յին ու արհեստանոցային բանվորներին: (Մոտ միկ
հինգերորդ մասին ամբողջ պրոկլամարիատի): Մնացած
բանվորներին ու ծառայողներին նոր որենքները վոչ
մի ոգուտ չը տվին:

Մենք ձգտում եինք, վոր ձրի ապահովագրվենք
գործարանատերերի ու պետութեան հաշվին, իսկ կայսե-
րական որենքը բանվորներին ստիպեց փոզ վճարել հի-
վանդանոցային գանձարկղներին: Այդպիսով մեր վճար-
ները համարյա յերկու անգամ ավելի եին, քան գոր-
ծաշանատերերի տված վճարները:

Մենք պահանջում եինք, վոր հիվանդանոցային
գանձարկղների ղեկավարութեան գործը միայն բանվոր-
ների ձեռքում կենտրոնացնել, վորպէսզի գանձարկղները
գործարանատերերից ու աստիճանավորներից կախում
չունենային, իսկ ցարական որենքները ընդհանուր ժողո-
վներնի ու գանձարկղների վարչութիւնների մեջ տեղ
տվին միայն գործատերերին ու «նշանակովի» մարդ-
կանց: Այդպիսով գանձարկղները հանձնակցին աստի-
ճանավորների հսկողութեան, վորոնք շատ աչալուրջ նե-

տևում եին գանձարկղների ամեն մի քայլին, թույլ չը տալով բանվորներին վոչ մի ինքնազործունեություն: Ապահովագրական ընկերություններն էլ, վորսնք ապահովում եին հաշմանդամ բանվորներին, որենքի համեմատ հանձնվեցին ամբողջովին գործատերերին, իսկ բանվորները միանգամայն զրկվեցին զեկավարելու վորեն մասնակցությունից:

Գործատերերը չեին իրադործում բանվորներին ձրի բժշկելու որենքները: Այդ պատճառով մենք պահանջում եինք բժշկական ոգնություն բոլոր գործերը հանձնել հիվանդանոցային գանձարկղներին, իսկ որենքն այդ գործը թողեց ելի գործարանատերերի ձեռքում: Դուրս եր գալիս, վոչ թե բանվորներին բժշկելու գործ, այլ միայն ձեակահնություն:

Մենք ձգտում եինք, վոր գանձարկղները, բանվորներին հիվանդություն ժանանակ, վճարենին ամբողջ աշխատավարձ, վորովհետև հիվանդն ավելի կարիք ունի փողի, քան թե առողջը (ուժեկացրած սնունդ և այլն), իսկ որենքով մենակյացին տրվում եր կես աշխատավարձ և բնտանիք ունեցողին՝ աշխատավարձի յերկու յերրորդը:

Այն ժամանակ մենք լավ եինք տեսնում կասերական որենքների թե այդ և թե ուրիշ սրակասությունները, բայց չնայած դրան, հիմնեցինք հիվանդանոցային գանձարկղներ և սկսեցինք պայքարել ինչպես գործատերների, այնպես էլ նրանց բարեկամ Նիկոլայ Ա-ի դեմ, ոգտագործելով հիվանդանոցային գանձակցները, վորպես զենք ինքնակալություն գեմ: Մենք հասկանում եինք և կյանքն էլ ցույց եր տալիս, վոր մենք կարող ենք բավարարել մեր բոլոր պահանջները, թե ապահովագրության և թե որիչ ուղղությունը, միայն այն զեպրում, յեթե հաջողեց-

նենք խորտակել ինքնակալությունը և խլել Նիկոլայի ու նրա աղնավանդների ձեռքից իշխանությունը:

Ընկերներ, յես շատ չեմ գրա-
 ժամանակավոր կա-
 ղեցնի ձեր ուշագրությունը, կանդ
 ապարուքյան որենք-
 չեմ առնի Կերենակիի կառավա-
 ցներ:
 րություն որենքների վրա: Այդ

որենքներն ևս շատ չեին լավացնում Սոցիալական ապահովագրություն պայմանները: Կերենակու որով, թեև գործատերերի վճարները մեծացան, բանվորներն առաջվա պես պարտավոր եին գանձարկղ մտցնել իրենց վճարները: Որական ամենաբարձր նպատուը հասավ 3 ուրլի 33 կոպեկից մինչև վեց ուրլի 66 կոպեկի, բայց բանվորները հիվանդություն ժամանակ, առաջվա պես ելի ամբողջ աշխատավարձ չեին ստանում: Ծիշտ և գանձարկղներն այժմ իրավունք ստացան բժշկական գործն իրենց ձեռքն առնելու, բայց գործատերերի վճարներն այնքան ցածր եին սահմանված, վոր շատ քիչ գանձարկղներ համարձակվեցին այդ գործն իրենց ձեռքն առնելու: Բժշկությունն առաջվա պես մեծ մասամբ գործատերերի ձեռքում մնաց: (Թեև, իհարկե, բանվորները կարիդացան գործատերերին սախել, մի քիչ լավացնել գործը):

Ժամանակավոր կառավարություն որենքները միայն ազատագրեցին հիվանդանոցային գանձարկղները, (ավելի ձիշտ կը լինի ասել, թե այդ բանն իրագործեց հեղափոխությունը, իսկ որենքները միայն իրենց հողվածները գրեցին), չը կարողանալով բավարարություն տալ բանվոր դասակարգի բոլոր պահանջներին:

Բանվորների ազատագրման խորհրդային կոմիտեի անդամների և անհատների խորհրդային կոմիտեի անդամների վրա, վորոնք հրատարակվել են 1917 թվի դեկտեմբերից մինչև 1921 թվի նոյեմբերի 15-ը: Այդ որոշումները հիմա ուժ չունեն և դրանց տեղ ուրիշներն են հրատարակված:

Բայց նախ քան այդ նոր որոշումները քննելը, թույլ տվեք մի քանի խոսք ասել, թե ինչու յե՛ն դրանք հրատարակված:

1918 թվից մինչև 1921 թվի, յերբ արհեստանոցներն ու գործարանները պետություն ձեռքին եին, Ռուսաստանում սոցիալական ազատության գաղափարը, բառի բուն իմաստով, չէր կար: Վոչ վոք չէր ազատագրում բանվորներին, վոչ վոք չէր վճարում ազատագրական վճարներ, այլ կար միայն պետական ազատություն: Այսինքն, պետությունն ազատում էր բոլոր չքավոր, աշխատավոր մարդկանց և դրանց թվում՝ բանվորներին: Իսկ վորովհետև այդ չքավորները Ռուսաստանում թվով շատ եին և հանրապետության միջոցները պատերազմից ու քաղաքական կռիվից քայքայված ու սահմանափակ՝ ազատությունն էլ մեծ չափով չէր տրվում:

Բայց 1921 թվականից սկսած մեր տնտեսությունն սկսեցինք նոր ձևով վարել: Գործարանների մի մասը փակվեց, մյուս մասն անցավ տնտեսական հաշվի, այսինքն գործարաններն իրենք պիտի պահեին իրենց, հոգալին իրենց ծախսերն ու նույնիսկ ոգուս բերեին: Արհեստանոցների ու գործարանների մի մասը կապվով արվեց մասնավոր մարդկանց ու կոոպերատիվներին:

Բանվորների աշխատավարձն էլ սկսեց մտտեսալ ապրուստի «կենսական միջխումբն»: Արհեստակցական միություններն սկսեցին իրազործել ու հաստատել այնպիսի աշխատավարձ, վոր բավականանում է շատ թեքիչ բանվորի ու իր ընտանիքի ապրուստին: Այստեղ, իհարկե, Սորհրդային կոմիտեի կողմից իր որոշումները, բանվորների աշխատավարձից զրկվելու դեպքում ապահովելու վերաբերյալ, փոխեց այնպես, վոր մի կողմից պետությունը ստիպված չլինեց իր հաշվով ապահովելու վնչ պետական բանվորներին ու ծառայողներին և մյուս կողմից այնպես, վոր հնարավոր լինեց, խնայեց, ապահովելու բանվորներին, աշխատավարձը կորցնելու դեպքում և հնարավորություն տալու նրանց մի կերպ ապրելու մինչև գործ ձարելը:

1921 թվի նոյեմբերի 15-ին Ժողովի Սորհուրդը հրատարակում է բանվորների սոցիալական ապահովագրման վորոշում: Այդ որոշմի համաձայն, բոլոր գործարանները, արհեստանոցները, հիմնարկություններն ու տնտեսությունները, վորոնք ոգտվում են վարձու աշխատանքով, պարտավորվում են իրենց բանվորների ու ծառայողների համար ապահովագրական վճար մտցնելու, վորպեսզի ապահովագրեն բանվորներին և ծառայողներին աշխատավարձը կորցնելու բոլոր դեպքերում: Հիմնարկությունները վճարում են միմիայն իրենց գումարներից և իրավունք չունեն կտրելու վոչ մի բանվորի կամ ծառայողի աշխատավարձից և վոչ մի կոպեկ,

Այդ որոշմից հետո հրատարակվում են մի շարք վորոշումներ ու հրահանգներ, թե հիմնարկությունները վնքան պետք է վճարեն սոցիալական ապահովագրման

համար ու բանվորներն ինչպիսի նպատտ ստանալու իրավունք ունեն սպահովագրական գանձարկղից:

Ահա հենց այդ որենքների մասեն ե, վոր յես ուզում եմ մանրամասն գրույց անել ձեզ հետ:

Ապահովագրական գանձարկղի մեջ

Ապա տեսնենք, թե ի՞նչ ապահովագրական գանձարկղներ են հիմնվում: Ի՞նչ պետք է անեն այդ գանձարկղները: Դրանք ոգտակար են, թե՞ վնասակար: Ո՞վքեր պետք է ղեկավարեն այդ գանձարկղները: Գանձարկղներն ի՞նչպիսի նպատակներ են տալու բանվորներին:

Գանձարկղի կազմութեանը:

Ապահովագրական գանձարկղները, նոր որենքով, կազմակերպվում են ա) Գաղաքային, միջակ մեծութեան քաղաքների և բ) Ռայոնական՝ խոշոր քաղաքների համար, կամ այնպիսի տեղերի, ուր գործարանները շատ հետու են գտնվում իրարից: Ամեն մի քաղաքի, շրջանի բոլոր բանվորներն ու ծառայողները գրվում են իրենց շրջանի կամ քաղաքի գանձարկղի անդամ: Առանձին գործարաններում կարելի չէ կազմել սեփական գանձարկղ, միայն այն պեպքում, յերբ գործարանը գտնվում է քաղաքից կամ հարևան գանձարկղից հետու և բանվորներին անհարմար է հեռուտեղից ոգնութեան ստանալ:

Գանձարկղների ղեկավարութեանը:

Գանձարկղների ղեկավարութեանը գտնվում է ընտրովի բանվորների ձեռքում: Գործատերն

ընն, իհարկե, վոչ մի մասնակցութեան չունեն գործը վարելու մեջ: Հիմնարկութեան ընդհանուր ժողովում բանվորներն ընտրում են արհեստակցական միութեան ղեկավարութեամբ իրենց լիազորներին, վորոնք մասնակցում են արհեստակցական միութեաններին կոնֆերենցիային: Հենց այդ կոնֆերենցիան է հանդիսանում գանձարկղի տերն ու տիրականը. նա յես հաստատում գանձարկղի կանոնադրութեանը, անդամների համար կանոններ մշակում և այլն:

Յեւ վորովհետեւ կոնֆերենցիան կազմված է մեծ թիվով լիազորներից, վորոնք չեն կարող ամեն որ հավաքվել, ընտրում է «գանձարկղի կոմիտե», վորն զբաղվում է նպաստներ տալու և ուրիշ գործերով:

Իսկ վորպեսզի կարելի լինի հետևել կոմիտեի աշխատանքին, կոնֆերենցիան ընտրում է «վերաստուգիչ հանձնաժողով», վորն ամեն ցանկացած բուպեյին կարող է վերստուգել գանձարկղի գործերը: Յեթե վերջինս, կոմիտեի աշխատանքը սխալ գտնելու լինի, կարող է իսկույն առաջարկել կոմիտեին ուղղել սխալը, կամ՝ կոնֆերենցիա գումարել կոմիտեն վերընտրելու նպատակով:

Թե կոմիտեն և թե վերաստուգիչ հանձնաժողովն ընտրում են վեց ամիս ժամանակով:

Ո՞վ և մասնակցում գանձարկղին:

Գանձարկղին մասնակցում են առանց բացառութեան բոլոր բանվորներն ու ծառայողները, բունը նրանք, վորոնք վորեն քաղաքում կամ ուայոնում աշխատում են վարձով, միկենույն ե, թե ո՞ւմ մտա—գործատիրոջ մոտ, գործարանում, արհեստանոցում, գրասենյակում, հիմնարկութեան մեջ և այլն: Մի խոսքով հենց

վոր մեկը վորեւ տեղ ծառայութեան կամ աշխատանքի յի մտնում, դրանով, ուղի չուզի, դառնում և ապահովագրական գանձարկղի անգամ: Ապահովագրումը որենքով պարտադիր է:

Ո՞վ է սալիս վճարներ գանձարկղին:

Ինչպես ասացի, բանվորներն ու ծառայողները գանձարկղին վոչ մի կոպեկ չեն տալիս, այլ վճարում է նա, ում մոտ բանվորն աշխատում է՝ գործատեւրը, հիմնարկութունը, գործարանը, արհեստանոցը: Վոչ վոք իրավունք չունի գանձարկղի համար բանվորի կամ ծառայողի աշխատավարձից գումար կտրել: Այդ գումարները պետք է տան գործատեւրներն ու հիմնարկութուններն իրենց հաշվին:

Ե՞նչպիսի նպաստներ են սալիս գանձարկղները:

Նպաստների չափի մասին որենքների լույս տեսան աստիճանաբար ու զանազան ժամանակներում և տղվեցին այլ և այլ լրագրներում, ժողովածուներում և այլն: Յես քաղվածներ ևմ արել և տեղեկատվի նման մի բան կազմել սոցիալական ապահովագրման մասին, թե ի՞նչպիսի նըպատակներ են տրվում, ի՞նչ չափով, ի՞նչպիսի ժամանակամիջոցում և ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնել գանձարկղին, վորպեսզի այս կամ այն նշատեւր ստացվի:

Յեթև, ընկերներ չեք հողներ, յես կարող եմ կարգալ այդ տեղեկատուն, իսկ յեթև չեք ցանկանում... Խնդրում ենք, խնդրում ենք — լավեցին ամեն կողմից:

Գուցե կան մարդիկ, վոր հողներ են, իմ գեկուցումը շատ յերկարեց:

— Այդ բանը մենք հիմա կիմանանք — մեջ մտավ նախագահը. — Ո՞վ է համաձայն, վոր ընկ. Դանելյանը կարգա իր տեղեկատուն: Ո՞վ է հակառակ: Վոչ վոք: Պարզ է, հարցը բոլորին հետաքրքրում է: Կարգաձեք, ընկ. Դանելյան:

Դանելյանը հանեց կողքի գրպանից տետրակը և ակնոցով զինված՝ սկսեց կարգալ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ *)

Ի՞նչպիսի նպաստներ են սալիս սպահովագրական գանձարկղները:

Ապահովագրական գանձարկղները տալիս են հետեւյալ նպաստները:

- Ա. Հիվանդութեան դեպքում:
- Բ. Արձակուրդի դեպքում հիվանդութեան պատճառով:
- Գ. Կարանալիսի դեպքում (յերը բանվորին կամ ծառայողին առանձնացնում են, նրա ընտանիքում վարակիչ հիվանդութեան յերևան գալու պատճառով):
- Դ. Ընտանիքի հիվանդ անդամին խնամք տանելու համար (մինչև հիվանդանոց տանելը):
- Ե. Բանվորուհիների ու ծառայող կանանց, հպիտութեան ու ծննդաբերութեան դեպքում:

*) Այս կում այն նպատ ստանալու ձևն իմանալու համար, այս գրքի վերջում գեակոված ցանկում պետք է գտնել, թե վոք յերևին և տալված այդ նպատտի մասին խոսող գլուխը և կարգալ:

2. Նորածին յերեխայի ծախսեր հոգալու նպաստ:

Ը. Նորածնին կերակրելու նպաստ:

Թ. Գանձարկղին մասնակցողների և նրանց ընտանիքի անդամների թաղման նպաստ:

Փ. Կենսաթոշակ ինվալիդ բանվորներին ու ծառայողներին:

Ի. Կենսաթոշակ մեռած, կամ անհետ կորած բանվորների, կամ ծառայողների ընտանիքներին:

Լ. Նպաստ գործազուրկներին:

1. Ո՞վ ունի իրավունք նպաստ ստանալու:

Ա. Նպաստ հվանդուրյան պատճառով:

Հիվանդութեան պատճառով նրա պատ ստանում են նրանք, վորոնք մասնակցում են ապահովագրական գանձարկղին և վորոնց ապահովագրական գանձարկղի բժշկը գտնում է հիվանդ ու ժամանակավորապես աշխատելու անընդունակ: Ապահովագրական գանձարկղն իրավունք չունի բանվորին նպաստ չը տալու պատճառ բերելով, թե հիմնարկութեան տերը չի մտցրել ապահովագրման վճար: Դրա համար որենքի առջև պատասխանատու չե գործատեերը՝ և վոչ թե բանվորը:

2. Ի՞նչ չափով է սրվում նպաստ:

Հիվանդութեան պատճառով նպաստ տրվում է այն տարիֆային վարձի համաձայն, վորը սահմանված է հիվանդ բանվորի կամ ծառայողի աշխատած հիմնարկութեան մեջ, նույն կատեգորիային պատկանող բանվորի և ծառայողի համար նպաստը տրվելու մոմենտին: Բայց համեմայն դեպո, տրվելիք նպաստը, հի-

վանդ բանվորի խսկական աշխատավարձից պակաս չը պետք է լինի: Նա պետք է ստանա այնքան, վորքան նա ստանում էր հիվանդանալուց անմիջապես առաջ: Նրա պատը չը պետք է լինի նույնպես և բարձր, քան պատասխանատու քաղաքական աշխատավորի տարիֆային 17-րդ կարգը (Բոլոր հավելումներով):

Այսպիսով, յեթե հիվանդի խսկական աշխատավարձը (բոլոր հավելումներով) տարիֆային վարձից բարձր է, այսինքն ավելի բարձր, քան թե ստանում են նույն հիմնարկութեան մեջ աշխատող և նույն կատեգորիային պատկանող բանվորները, նպաստ պետք է տրվի խսկական աշխատավարձի չափով:

Իսկ յեթե հիվանդի աշխատավարձի ընդհանուր գումարը գերազանցում է պատասխանատու քաղաքական աշխատավորի տարիֆային վարձի 17-րդ կարգը (բոլոր հավելումներով), նպաստ տրվում է պատասխանատու քաղաքական աշխատավորի տարիֆային վարձի 17-րդ կարգի համաձայն և բոլոր հավելումներով:

Բացի դրանից, յեթե հիվանդի աշխատած հիմնարկութեան մեջ (հիվանդութեան միջոցին) բանվորների աշխատավարձը բարձրանալու լինի, նպաստն էլ պետք է նույն չափ ավելի տրվի: Յեթե նույն միջոցին աշխատող բանվորներին վորեէ պարենի փայ է տրվում, հիվանդն էլ իրավունք ունի նույն, կամ ուրիշ պարենի փայ ստանալու, ընդհանուր հիմունքներով, ինչ վոր ասողիները:

Այդ դեպքում նրան տրվում է կենսաթոշակ, վորպես աշխատանքի ինվալիդի: (Տես գլուխ «Թ» ինվալիդների ավանդման մասին):

Նպաստ տրվում է այն ժամանակամիջոցի համար, յերբ բանվորը հիվանդութեան պատճառով իսկապես չի աշխատել: Իսկ յեթե գանձարկղի անդամը հիվանդ է և աշխատում է, այդ դեպքում նպաստ չի տրվում:

Յեթե հիվանդ բանվորը կամ ծառայողը տեղավորվում է հիվանդանոցում, սանատորիայում, հանգստի տանը և այլն, ժամանակավորապես աշխատանքի ընդունակութունը կորցնելու պատճառով, ստանում է իր աշխատավարձի դրամական մասը, իսկ յեթե մինչ այդ պարենի վորակ փայ եր ստանում, զրկվում է դրանից, քանի գտնվում է հիվանդանոցում, կամ ուրիշ բուժարանում: Ընտանիքի անդամները պարենի փայը շարունակամ են ստանալ, յեթե առաջ ել ստանում եին:

Մենակյաց հիվանդները, վորոնք գտնվում են հիվանդանոցում, սանատորիայում, հանգստի տանը և այլն, ստանում են նպաստ ոտճիկի կեսի շափ, իսկ ընտանիքավորները՝ ամբողջ նպաստ:

4. Ի՞նչ փաստաթղթեր պեճ է ներկայացնել նպաստ ստանալու համար:

Նպաստ ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել ապահովագրական գանձարկղին բժշկի և տեղկումի կողմից վավերացված բյուլետեն: Հիվանդն իր աշխատած հիմնարկութունից, յերթեկեկ հիվանդանոցից կամ ապահովագրական գանձարկղից ստանում է թերթիկ և իսկույն գիտում ամբուլատորիա կամ հիվանդանոց: Թերթիկի վրա բժիշկը նշանակում է հիվանդանալու որը և ամեն հաճախելուն՝ թերթիկի վրա նշանակում է հիվանդի դրութունը:

Յերբ բժիշկը՝ հաստատում է, վոր գանձարկղի ան-

դամն առողջացած է, հիմնարկութեան կամ գործարանի վարչութունը թերթիկի վրա նշանակում է հիվանդութեան պատճառով աշխատանքը դադարեցնելու և վերսկսելու որը, նրա աշխատավարձը հիվանդանալուց առաջ և նույն կատեգորիային պատկանող բանվորների տարիֆային վարձը: Բանվորն այդ թերթիկը հանձնում է ապահովագրական գանձարկղին և փոխարեն ստանում է համապատասխան ցուցմունքներով տոմսակ, թե յերբ և վորտեղ պետք է նպաստ ստանա:

Իսկ յեթե հիվանդութունն յերկար է տևում, այդ թերթիկը, բժշկի ու հիմնարկութեան նկատողութուններով ներկայացվում է գանձարկղին, յերկու շաբաթը մեկ անգամ, նպաստ ստանալու համար: Գանձարկղը դրա փոխարեն տալիս է նորը (թերթիկի շարունակութունը) և տոմսակ՝ հին թերթիկով նպաստ ստանալու իրավունքով:

Յեթե գանձարկղի անդամը նպաստ ստանալու համար անձամբ չի ցանկանում ներկայանալ, կարող է տոմսակի մյուս յերեսին նշանակել թե ում է վստահում նպաստ ստանալը:

Տոմսակը կորցնելու դեպքում անհրաժեշտ է իսկույն հայտնել գանձարկղին, վորպեսզի նպաստն ուրիշին չը տրվի:

5. Ի՞նչպես կարելի է արձակուրդ ստանալ:

Տ. Հիվանդութեան պատճառով արձակուրդի նպաստ:

Յեթե ապահովագրական գանձարկղի բժիշկը գտնում է, վոր առողջութունը վերականգնելու համար հիվանդին անհրաժեշտ է արձակուրդ ստանալ, նա պետք է այդ նշանակի թեր-

թիկի վրա: Հիվանդն այդ թերթիկը պետք է ներկայացնի գանձարկղին մինչեւ արձակուրդ զնալը: Գանձարկղը կարող է արձակուրդի իրավունք տալ կամ վրասահելով իր բժշկի վորոշման, կամ թե՛ ուղարկելով բժշկական վերահսկիչ հանձնաժողովի քննութեան:

Այն անդամը, վորն ստանց ապահովագրական գանձարկղի թույլտվութեան արձակուրդ է զնում, նպաստ չի ստանում:

6. Ո՛վ ունի իրավունք հիվանդութեան պայսնառով արձակուրդ ստանալու:

Բոլոր բանվորներն ու ծառայողները, վորոնք ապահովագրական գանձարկղի անդամ են, այսինքն ապահովագրված են, իրավունք ունեն արձակուրդ ստանալու հիվանդութեան պատճառով:

7. Վճ՞ր չափ նպաստ է սրվում:

Արձակուրդի ժամանակ նպաստ տրվում է նույնչափ, ինչ վոր հիվանդութեան ժամանակ: (Տես տեղեկատվի 2 կետը):

8. Արձակուրդի նպաստը վճարուհի ժամանակ է սեվում:

Ապահովագրական գանձարկղի թույլ տված արձակուրդի ամբողջ ժամանակամիջոցի համար նպաստ սկզբից է տրվում:

Յեթե արձակուրդ ստացող հիվանդը փոխադրվել է ուրիշ վայր է չը բավարարվելով, ցանկանում է ելլ արձակուրդ ստանալ, դիմում է նույն տեղի ապահովագրական գանձարկղին և իրավունք ստանալով, փաս-

տաթղթերն ուղարկում է իր գանձարկղին հաստատելու համար:

Արձակուրդում ինքնակամորեն յերկար մնացողները, նպաստ չեն ստանում:

9. Ի՞նչ փաստաթղթեր են հարկավոր արձակուրդի նպաստ ստանալու համար:

Ով ցանկանում է արձակուրդ ստանալ, պետք է ներկայացնի գանձարկղի բժշկի նկատողութեամբ թերթիկ և հիմնարկութեան վկայութեան նույն թերթիկի վրա, աշխատավարձի և աշխատանքն ընդհատելու որվա մասին: (Տես տեղեկատվի 4 կետը):

Իսկ արձակուրդն ավելացնելու դեպքում պետք է ներկայացնել ապահովագրական գանձարկղի տեղեկութեան, վորով ավելացվել է արձակուրդը և հիմնարկութեան տեղեկութեան արձակուրդի միջոցին նույն կատեգորիային պատկանող բանվորների տարիֆային վարձի մասին:

10. Վճ՞ր դեպքերում է սրվում նպաստ կարանքինի համար:

Յեթե ապահովագրածի ընտանիքում կարանքինի առթիվ:

Յեթե ապահովագրական գանձարկղի բժիշկը կարգադրում է ապահովագրածին առանձնացնել, (հիվանդութեանը չը տարածելու նպատակով) առանձրացրածն իրավունք ունի այդ առթիվ հատուկ նպաստ ստանալու:

11. Ո՞վ իրավունք ունի այդպիսի նպաստ ստանալու
Բոլոր ապահովագրածներն իրավունք ունեն այդ-
պիսի նպաստ ստանալու:

12. Վճարչափ նպաստ է սրվում:

Կարանտինի առթիվ նպաստ տրվում է նույնչափ,
վորչափ հիվանդության ժամանակ: (Տես այս տեղեկա-
տվի 2 կետը):

13. Վճար ժամանակավիջոցի համար է նպաստ
սրվում:

Նպաստ տրվում է այն ժամանակի ընթացքում,
վոր ապահովագրածը անց է կացնում առանձնարարում:

14. Ի՞նչ փաստաթղթեր են հարկավոր կարան-
տինի առթիվ նպաստ ստանալու համար:

Կարանտինից դուրս գալուց հետո, ապահովագրա-
ծը պետք է ներկայացնի գանձարկղին բժշկի տված
տեղեկություն, թե վճարան ժամանակ է մնացել ա-
ռանձնացրած և ի՞նչ պատճառով: Բացի դրանից պետք
է ներկայացնել հիմնարկությունից տեղեկություն աշ-
խատավարձի քանակի մասին կարանտին մտնելուց
առաջ և նույն կատեգորիայի մյուս բանվորների աշխա-
տավարձի մասին:

15. Վճար դեպքերում է նպաստ սրվում:

Նպաստ բեռանքի
հիվանդ անդամին խը-
նամելու համար:

Յեթե ապահովագրածի ընտա-
նիքում վորն է մեկը ծանր հի-
վանդանում և և մինչև նրան հի-
վանդանոց տանելը կարիք է լի-
րժիշկն այդ անհրաժեշտ և գլու-

նում խնամատարի և

նում՝ բանվորն իրավունք ունի աշխատանքի չը գնալու
և բացի դրանից նպաստ ստանալու հիվանդին խնամե-
լու առթիվ:

16. Ո՞վ իրավունք ունի խնամասարուրջյան
համար նպաստ ստանալու:

Խնամատարության համար նպաստ ստանալու ի-
րավունք ունեն բոլոր ապահովագրածներն առանց բա-
ցատրության:

17. Նպաստի չափը:

Այս նպաստը տրվում է նույն չափով, ինչ չա-
փով ստանում են հիվանդության դեպքում: (Տես տեղե-
կատվի 2 կետը):

18. Վճարան ժամանակավիջոցում է սրվում
նպաստ խնամասարուրջյան առթիվ:

Նպաստ տրվում է այնքան ժամանակավա ընթաց-
քում, վորքան ապահովագրածը, բժշկի կարգադրու-
թյամբ, խնամում է ընտանիքի հիվանդ անդամին, մինչև
վերջինիս հիվանդանոց տանելը:

19. Ի՞նչ փաստաթղթեր են հարկավոր խնամա-
սարուրջյան առթիվ նպաստ ստանալու համար:

Խնամատարության համար նպաստ ցանկացող-
ները, պետք է ապահովագրական գանձարկղին ներկա-
յացնեն. 1. Ապահովագրական գանձարկղի բժշկի կող-
մից տեղեկություն, վոր իսկապես ապահովագրածի
ընտանիքի անդամն այս ինչ որից հիվանդացել է, այս
ինչ հիվանդությամբ, այս ինչ որը տեղավորվել է հի-

վանդանոցում և վոր հիվանդին մինչև այդ առանց խը-
նամքի թողնելը վտանգավոր եր:

2. Վոր տեղ չը վրնելու, կամ ուրիշ պատճառով
հիվանդը չի տեղավորված հիվանդանոցում:

3. Վոր ընտանիքում հիվանդին խնամող ուրիշ
մարդ չը կար, բացի ապահովագրածից:

4. Տեղեկութուն հիմնարկութունից, թե յե՞րբ և
ընդհատել ու վերսկսել աշխատանքը և թե վճարքան եր
ստանում: (Տես տեղեկատվի 4 կետը):

20. Ո՞վ նպաստ ստանալու իրավունք ունի:

Ե. Նպաստ ապահո-
վագրվածներին եզի-
ուրջան յեվ ծննդաբե-
ուրջան առքիվ.

Այս նպաստը ստանալու ի-
րավունք ունեն, առանց բացառ-
ության, բոլոր ապահովագրած
կանայք, այսինքն բոլոր բանվո-
րուհիներն ու ծառայող կանայք:

21. Նպաստի չափը:

Այս նպաստը տրվում է նույն չափով, ինչ վոր
հիվանդության ժամանակ (տես տեղեկատվի 2 կետը)
և գանձարկը վսչ մի դեպքում իրավունք չունի այս
նպաստը պակասեցնելու նույնիսկ՝ ֆինանսական ճգնա-
ժամին:

22. Վոր՞եան ժամանակվա համար է սրվում նպաստ հղիներին ու ծննդկաններին:

Այն բանվորուհիները, վորոնք ֆիզիկական աշ-
խատանքով են դրադվում, նպաստ ստանում են ծննդա-
բերութունից ութ շաբաթ առաջ և ութ շաբաթ հե-
տո, իսկ մնացած կանայք՝ վեց շաբաթ առաջ և վեց

շաբաթ հետո: Սրանք բոլորն ել նույն ժամանակամի-
ջոցում ազատվում են աշխատանքից:

Բերում ենք այն աշխատավոր կանանց ցուցակը,
վորոնք թեյեվ ֆիզիքական աշխատանքով չեն զբաղ-
վում, բայց նույնպես իրավունք ունեն ազատվելու
ծննդաբերութունից 8 շաբաթ-առաջ յեվ 8 շաբաթ
հետո:

1. Հեռախոսի կայանի ծառայող կանայք:

2. Հեռագրատան ծառայող կանայք:

3. Մանկաբարձուհիները:

4. Գթության քույրերը:

5. Մասսաժիստկանները:

6. Հոգեկան հիվանդանոցների ու դրանց բաժան-
մունքների բժշկուհիները, ֆեւլդշերուհիներն ու վերա-
կացուհիները:

7. Բժշկուհիներն ու ֆեւլդշերուհիները, վորոնք
գանվում են գյուղական շրջագայող ծառայության մեջ
և տների մեջ են բժշկական ոգնություն ցույց տալիս.
Նույնպես և շրջագայող խմբերի, վիրաբաժանն ու
վարակիչ հիվանդությունների և սրանց բաժանմունք-
ների և մանկաբարձական հիմնարկությունների բժշ-
կուհիներն ու ֆեւլդշերուհիները:

8. Խորհրդային ամբուլատորիաների ատամնա-
բույժ կանայք:

9. Մանկատների, մանկապարտեզների ու ման-
կական գաղութների վարչուհիներն ու դաստիարակչուհի-
ները, դպրոցների ուսուցչուհիները, I և II աստիճանի
գիշերթիկ դպրոցների դաստիարակչուհիները, Ֆիզի-
քական կրթության հրահանգչուհիները, բանտերում
ուլտուր-կրթական աշխատանք կատարող կանայք:

10. Գրամայի, ոպերայի, բալետի և կրկեսի բեմ յեւնոյ զերասանուհիները:

11. Բոլոր մշտական գիշերային աշխատանքով զբաղվողները:

12. Հրահանգչական ու տեսչական պաշտոն վարող անհատները, վարոնց աշխատանքը պահանջում է անընդհատ շրջագայութիւն:

13. Կին գեղագործները:

14. Փոստհեռագրական կայաններում նամակներ ջնկող կանայք:

15. Գրող մեքենայի վրա աշխատող կանայք:

23. Ի՞նչ փաստաթղթեր են պէ՛սֆ:

Ապահովագրած հղի աշխատավորուհիները պետք է ներկայացնեն բժշկից ապահովագրական դանձարկղին հղիութեան յոթերորդ ամիսը լրանալու վկայական, իսկ ծննդկանները՝ ծննդյան վկայական:

Բացի դրանից, թէ ատաղին և յերկրորդ զեպրում անհրաժեշտ է ներկայացնել հիմնարկութեանից վկայական, թէ յէ՛րը և աշխատանքը դադարեցված և աշխատավարձի չափը (տես տեղեկատվի 4-րդ կետը):

24. Ո՞վ ունի իրավունք նպաստ ստանալու:

Ձ. Նպաստ նորածնի ծախսերը հոգալու համար: (տես մեկու պիտակների համար):

Յերեխայի ծախսերը հոգալու նպաստ իրավունք ունեն ստանալու.

ա) Բոլոր բանվորուհիներն ու ծառայող կանայք:

բ) Բոլոր բանվորներին և ծառայողներին կանայք:

գ) Կենսաթոշակ ստացող ինվալիդների կանայք:

դ) Կենսաթոշակ ստացող ինվալիդ կանայք:

ե) Մեռած բանվորների ու ծառայողների այրիները, վորոնք այդ առթիվ կենսաթոշակ են ստանում և չեն ամուսնացած:

զ) Գործազուրկ կանայք, վորոնք այդ առթիվ նպաստ են ստանում:

և) Նպաստ ստացող գործազուրկների կանայք:

ը) Զորակոչի յենթարկված բանվորների ու ծառայողների կանայք (նույնպես և գործազուրկներին, վորոնք այդ առթիվ նպաստ են ստանում), յեթէ ծննդաբերութեանը տեղի չէ ունենում գորակոչի յենթարկելու որից մի ամսվա ընթացքում:

Ծննդաբերութեան առթիվ նպաստ ստանալու իրավունք ունի ամեն մի ապահովագրված, յեթէ նա կը դիմի գանձարկղին յերեխայի ծնվելու որից ինն ամսվա ընթացքում: Հակառակ դեպքում նա զրկվում է նպաստից:

25. Նպաստի չափը:

Այս նպաստը արվում է ծննդաբերութեանը տեղի ունեցած վայրի ամսական միջին աշխատավարձի չափ:

26. Վարձան ժամանակ է քվում այս նպաստը:

Նպաստը միանվագ է լինում:

27. Ի՞նչ փաստաթղթեր են պէ՛սֆ նպաստ ստանալու համար:

Նպաստ ցանկացողները պետք է գանձարկղին ներկայացնեն.

ա) Փատաթուղթ, վորից յերևա, թէ ծննդկանը պատկանում է այն կանանց թվին, վորոնք հիշված են

տեղեկատվի 24-րդ կետում (մոր կամ հոր ծառայութեան վկայական, գործադրկութեան թերթիկ, ինվալիդութեան տոմս և այլն) և

բ) Յերեխայի ծննդյան վկայական:

Յեթե այս փաստաթղթերը դանձարկղում արդեն կան, կարիք չկա յերկրորդ անգամ ներկայացնելու:

Ժա ռ[թու]թյուն 1. Յեթե յերեխաները զույգ են ծնվում, նպաստն ել կրկնակի յե տրվում:

Ժանոթ[թու]թյուն 2. Մահմեդական ընտանիքներին, ուր գոյություն ունի բազմակնություն, քանի վոր այդ թույլ և տրվում ըստ սովորութեան, ծննդաբերութեան առթիվ նպաստ տրվում և ապահովագրվածի բոլոր կանանց:

28. Ո՞վ ունի իրավունք նպաստ ստանալու:

Նորածնին կերակրելու համար նպաստ ստանալու իրավունք ունեն բոլոր այն կանայք, վորոնք հիշված են այս տեղեկատվի 24-րդ կետում:

29. Նպաստի չափը:

Այս նպաստը կազմում է ամսական միջին աշխատավարձի 18 տոկոսը:

30. Վորքան ժամանակ է տրվում նպաստ:

Նպաստ տրվում է ծննդաբերութեան որից հետո ամեն ամիս և 9 ամիս շարունակ: Նպաստը տրվում է այն որից, յերբ ապահովագրվածը դիմում է գանձարկղին: Այս նշանակում է, վոր, յեթե դիմումը կատարվում է յերեխայի ծնվելուց մի ամիս անց, նպաստ տրվում է մնացած 8 ամսվա համար:

Նպաստ տրվում է անկախ այն բանից, թե մայրն իր կաթով է կերակրում յերեխային, թե վոչ:

Նպաստ տրվում է նաև վորդեգրած յերեխաների համար, յեթե ապահովագրածը համապատասխան փաստաթղթեր կը ներկայացնի Ապահովագրական գանձարկղին:

Ապահովագրած մահմեդականի ընտանիքին, մահկան կերակրելու նպաստ տրվում է կանանց և յերեխաների թվի համեմատ:

Յերեխային կերակրելու նպաստը տրվում է մի ամսվանը առաջուց յեվ այնուհետ յեվ ամեն շաբաթ վորոշված որերին:

31. Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնել այդ նպաստը ստանալու համար:

Յեթե մայրը ծննդաբերութեան առիթով միանվագ նպաստը ստացիլ է, այնուհետև պետք է ամեն ամիս ներկայացնել վկայական, վոր յերեխան կենդանի է. հավառակ դեպքում պետք է ներկայացնել ծննդյան վկայական:

32. Ո՞վ ունի իրավունք քաղվան նպաստ ստանալու յեվ ինչ պայմաններում է տրվում այս նպաստը:

Թաղման համար նպաստ տրվում է հետևյալ անձանց և նրանց աշխատանքով ապրող ընտանիքի անդամների մահվան դեպքում

- ա) Ապահովագրած բանվորների ու ծառայողների,
- բ) Կենսաթոշակ ստացող ինվալիդների,
- գ) Այրիութեան ու վորրութեան առիթով նպաստ ստացողների ու նրանց ընտանիքի անդամներին,

դ) Նպաստ ստացող զործագուրկներին,

ե) Զորակոչի յենթարկված բանվորներին ու ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին, նույնպես և գործազրկութեան նպաստ ստացողներին, յեթե մահը տեղի յե ունեցել վոչ ուշ քան զորակոչից մի ամիս հետո:

33. Թաղման նպաստի չափը:

Թաղման նպաստ կարելի ստանալ տվյալ վայրի ամսական միջին աշխատավարձի չափ և միանվագ: (Տես տեղեկատվի 24-րդ կետը):

34. Ի՞նչ փաստաթղթեր են պետք բաղման նպաստ ստանալու համար:

Նպաստ ստանալիս, պետք է ներկայացնել մահվան վկայական և բացի դրանից փաստաթուղթ՝ թե մեռնողը բանվոր էր, կամ ծառայող, ինվալիդ և այլն: (Վկայական ծառայութեան մասին, ինվալիդութեան տուժման, գործազրկութեան վկայական և այլն):

Ընտանիքի անդամի մահվան դեպքում պետք է ներկայացնել վկայական, վոր վախճանվածն ուղբում էր ապահովագրածի աշխատանքով:

35. Ի՞նչ պայմաններում է սրվում կենսաբուժական ինվալիդության առիթով:

Թ. կենսաբուժական ինվալիդության դեպքում:

կենսաթոշակ սրվում է այն անձանց, վորոնց բժիշկները գրառում են աշխատելու ընդմիջման ընդհատում:

36. Ո՞վ իրավունք ունի ինվալիդության կենսաբուժական ստանալու:

Ինվալիդութեան առիթով կենսաթոշակ ստանալու իրավունք ունեն.

ա) Բոլոր բանվորներն ու ծառայողները, վարձուք հիվանդութեանից կամ հաշմանդամութեանից ինվալիդ են դարձել և

բ) Ծերութեան պատճառով ինվալիդ դարձաները, յեթե նրանք վարձով ախշատել են ամենաքիչը 8 տարի:

18 տարեկան հասակից վարձով աշխատողներն յեվ Կարմիր քանակից արձակվածներն ուղտվում են նպաստ ստանալու իրավունքից, անկախ այն ըսնից, թե վորքան ժամանակ են աշխատել, յեթե Կարմիր քանակի ծառայութեանից ազատվելուց հետո աշխատել են վարձով:

Այն անձինք, վորոնք ամենաքիչը 8 տարի աշխատել են վարձով ու աշխատանքի անընդունակութեան պատճառով, հեղափոխութեանից առաջ, թողել են գործը, իրավունք ունեն կենսաթոշակ ստանալու, յեթե ա) ինվալիդներին կենսաթոշակ սահմանող դեկրետը հրատարակվելուց 2 տարվա ընթացքում ինքիք են ներկայացրել իրենց կենսաթոշակ նշանակելու, անկախ այն բանից, թե վորքան ժամանակ է անցել աշխատանքը թողնելուց մինչև դեկրետի հրատարակվելը և բ) նույն ժամանակամիջոցում ուրիշ աշխատանքը չեն շահագործել:

Առանձին դեպքերում Սոցիալական Ապահովագրութեան մարմիններն իրավունք ունեն նպաստ նշանակելու, անկախ այն բանից, թե վորքան ժամանակ է

տեկ վարձով աշխատելը, յեթե կան հատուկ բացառիկ պայմաններ, վորոնցից առաջ ե յեկել աշխատանքի անընդունակությունը: Այսպիսի դեպքերի մասին սոցիալական ապահովագրության մարմինները հայտնում են Հանրապետության Ապահովագրության վարչության ի հաստատություն:

37. Վճարման կենսաթոշակ ե srվում ինվալիդներին:

Ինվալիդ ել կա, ինվալիդ ել. մեկն անողնակա՛ն ե, կարիք ունի ուրիշի խնամքի (կույր, կաթվածահար), մյուսը կարող ե ապրել առանց ուրիշի ոգնության, իսկ յերրորդը՝ կարող ե, նույնիսկ, աշխատել թեթե կերպով:

Յեվ ահա, թե ի՞նչ չափով ե քայքայված մարդու ատողությունը, դրա համեմատ ել ինվալիդները բաժանվում են մի քանի խմբի: Կենսաթոշակ տրվում ե այն ինվալիդներին, վորոնք չեն կերող աշխատել:

Այդպիսի ինվալիդների 3 խումբ կա, իսկ ընդամենը՝ 5 խումբ:

1. Ինվալիդներ, վորոնք ընդունակ չեն վոշ մի աշխատանքի ե կարիք ունեն ուրիշի խնամքի: Իրանք ստանում են կենսաթոշակ ամսական միջին աշխատավարձի 70%օ-ը: (Տես տեղեկատվի 24-դ կետը):

2. Ինվալիդներ, վորոնք կարիք չունեն ուրիշի խնամքի, բայց աշխատանքի անընդունակ են: Մրանք ստանում են ամսական միջին աշխատավարձի կեսը (50%օ):

3. Այն ինվալիդները, վորոնք պարբերական վոշ մի աշխատանքի ընդունակ չեն, բայց պատահական, ժամանակավոր ե թեթե աշխատանքով կարող են միջոց-

ներ ճարել, ստանում են ամսական միջին աշխատավարձի 35%օ:

4. Ինվալիդներ, վորոնք կարող են իրենց կվալիֆիկացիայից ցածր աշխատանքով զբաղվել:

5. Ինվալիդներ, վորոնք կարող են իրենց արհեստից անցնել ուրիշ, բայց նույն կվալիֆիկացիայի արհեստի: (Ապահովագրական մարմինների ոգնությամբ):

Այս վերջին յերկու խմբի ինվալիդները (4 ե 5) ապահովվում են, կամ համապատասխան գործ ստանալով, կամ՝ զրվելով ինվալիդների արդյունաբերական-սպառողական կոոպերացիայի անդամ:

4-րդ յեվ 5-րդ խմբին պատկանող ինվալիդները, նպաստ ստանալու խնդրում, ճանաչվում են իբր գործազուրկներ, ինվալիդ ճանաչելու որից սկսած մինչյեվ նրանց ապահովելը:

Ժանտխոթյուն. 4-րդ ե 5-րդ խմբի ինվալիդները զրկվում են նպաստ ստանալու իրավունքից, յեթե նրանց գործ ե տրվում, իրենց աշխատանքի ընդունակության համեմատ ե նրանք հրաժարվում են:

Սոցիալական ապահովագրության մարմիններն իրավունք ունեն առաջին ե յերկրորդ խմբի ինվալիդներին տալիք զբամական նպաստը փոխարինելու, նրանց հատուկ տներում տեղավորելով (ինվալիդական տուն):

Սոցիալական ապահովագրության մարմինները կարող են նյութապես ոգնել այն ինվալիդներին (բոլոր հինգ խմբի), վորոնք արդյունավետ տնտեսության կամ արհեստի տեր են ե ոգնության կարիք ունեն: Յերը այս ձևով ես անկարելի յե լինում ապահովել, նը-

րանց կամ տեղ ե արվում ինվալիդները աներում, կամ դրամական նպաստ նշանակվում:

Ծանոթութիւն. Ինվալիդների հատուկ տներում տեղավորված 1 և 2-րդ խմբին պատկանողներն, իրենց հաշվին ապրող աշխատանքի անընդունակ ընտանիքի անդամների համար, ստանում են նպաստ հետեյալ չափով. ընտանիքի մեկ անդամ ունեցողները — ամսական միջին աշխատավարձի 25⁰/₁₀₀, յերկու անդամ ունեցողները — 35⁰/₁₀₀ և աշխատանքի անընդունակ յերեք անդամ ունեցողները — 50⁰/₁₀₀:

Սոցիալական Ապահովագրութեան մարմինները կողմից կազմակերպված արդյունաբերական և արդյունաբերական-ապաստակական ինվալիդական կոոպերատիվները և ուրիշ աշխատանքային միութեւոններն ազատվում են բոլոր ընդհանուր, պետական և տեղական տուրքերից և ժողովարարութեւոններից:

38. Մինչեւ յե՞րբ են ինվալիդները կենսաբոցակ ստանում:

Ինվալիդութեան կենսաթոշակ արվում է մինչև բժիշկների հայտնելը, թե ինվալիդը աշխատանքի ընդունակ է դարձել: Հակառակ դեպքում՝ կենսաթոշակ արվում է մինչև մահ և նույնիսկ ինվալիդի մահից հետո, յեթե մնում են կենսաթոշակ ստնալու իրավունք ունեցող ընտանիքի անդամներ:

39. Ի՞նչ փաստաթղթեր են պէտք ինվալիդութեան կենսաբոցակ ստանալու համար:

Վորպսեղի ինվալիդն իրավունք ունենա կենսաթոշակ ստանալու, պետք է վկայական ներկայացնի՝

վերջին ծառայութեան տեղից, իսկ ծերութեան հետևանքով ինվալիդ դարձածները՝ բացի դրանից, պետք է ներկայացնեն վերջին 8 տարվա ծառայութեան փաստաթուղթ:

Դրանից հետո ապահովագրական գանձարկը ներանց ուղարքում է բժշկական քննութեան և վերջինի յեզրակացութեան համեմատ կենսաթոշակ նշանակում:

Յեթե ինվալիդը ծառայութեան վկայական չունի, նա կարող է դիմել տեղի ժողովրդական դատավորին և դատարանի միջոցով հաստատել, թե ինքը 8 տարի վարձով ծառայել է:

Ծանոթութիւն. Յեթե ինվալիդը գործը թողնելուց հետո յերկու տարվա ընթարքում չի դիմել կենսաթոշակ ստանալու, զրկվում է այդ իրավունքից:

40. Կարո՞ղ են արդյո՞ւ աշխատանքի ինվալիդներն իրենց ապրուստի տեղը փոխել, չկորցնելով կենսաբոցակ ստանալու իրավունքը:

Այո, կարող են: Այն ինվալիդները, վորոնց ապահովագրական գանձարկը ապահովում է, կարող են փոխել իրենց ապրուստի տեղը վոչ միայն Հանրապետութեան սահմաններում, այլ և Հանրապետութեան ներքին Միութեան սահմաններում և ստանալ կենսաթոշակ ապրած վայրում:

Ծանոթութիւն. Իր ապրուստի վայրը փոխել ցանկացող ապահովագրված ինվալիդը, ապրած տեղի ապահովագրական գանձարկից, պետք է ստանա պատճառաբանված փաստաթուղթ, վոր նրան անհրաժեշտ է տեղափոխվել (ընտանեկան պայմաններ, յերաշխավորում և այլն):

41. Արդյո՞ք աշխատանքի ինվալիդներն իրավունք ունեն՞ն ձրի բժշկվելու:

Այո, ունեն: Ամեն մի աշխատանքի ինվալիդ, վորն ապահովագրական գանձարկից նպաստ է ստանում, ողտվում է ամեն տեսակ ձրի բժշկությունից և ձրի դեղերից, ինչպես մնացած ապահովագրվածները:

Ինվալիդները արտոնություն են վայելում նաև տան վարձի վերաբերմամբ:

42 Ի՞նչ պայմաններում է սրվում կենսաթուշ:

Յեթե վոր և է բանվոր կամ ծառայող մեռնի, կամ անհետ կորչի և նրա ընտանիքի անդամները մնան առանց ապրուստի բավարար միջոցների, նրանց պետք է կենսաթոշակ տրվի:

Իսկ յեթե մեռածի, կամ կորածի ընտանիքի անդամներից մեկը յեկամուտ ունի, (ամենացածր սոցիալից վոչ պակաս) այդ դեպքում կենսաթոշակ չի տրվում:

Այդպիսի կենսաթոշակ ստանալու իրավունք ունեն ընտանիքի հետևյալ անդամները:

1. Անչափահաս յերեխաները (մինչև 16 տարեկան հասակը), նույնպես և յեղբայրներն ու քույրերը, վոչ միայն այն դեպքում, յերբ նրանք մնացել են բոլորովին վորբ, այլ և այն ժամանակ, յերբ հայրը կամ մայրը կենդանի յե (յեթե վերջինս ապահովագրածի կենդանության ժամանակ ընտանիք պահող չիբ):

2. Աշխատանքի անընդունակ այրին:

3. Աշխատանքի ընդունակ, բայց մինչև 8 տարեկան յերախտ ունեցող այրին:

4. Աշխատանքի անընդունակ ամուսինը, յեթե նա առաջ ապրում էր ապահովագրված կնոջ հաշվին:

5. Այրին, վորը թեև աշխատում է (կամ ծառայում), բայց մեկ, կամ մի քանի յերեխայի տեր է:

6. Ապահովագրածի աշխատանքի անընդունակ ծնողները (հայր, մայր), յեթե միայն նրանք, մինչև ապահովագրածի մահը, ապրում էյին նրա հաշվին և ընտանիքում ուրիշ աշխատող չունեն:

Ծանոթություն. Աշխատանքի անընդունակ են համարվում նրանք, վորոնց բժշկական մարմինները կըձանաչեն վորպես ինվալիդների առաջին յերեք խմբին պատկանող անձանց:

43. Կենսաթուշակի չափը:

Կենսաթոշակ տրվում է հետևյալ չափով.

1. Յեթե ընտանիքում կա մեկ անչափահաս (մինչև 16 տարեկան հասակը), կամ ինվալիդների առաջին յերեք խմբին պատկանող աշխատանքի անընդունակ վոր և է անդամ, նրան տրվում է ամսական միջին աշխատավարձի 25%:

2. Աշխատանքի անընդունակ, կամ 8 տարեկանից փոքր յերեխա ունեցող այրին ստանում է ամսական միջին աշխատավարձի 25%:

3. Յեթե ընտանիքում կա յերկու անչափահաս, կամ աշխատանքի անընդունակ, ստանում են ամսական միջին աշխատավարձի 35%:

4. Յեթե ընտանիքում կա յերեք ու ավելի անչափահաս, կամ աշխատանքի անընդունակ տրվում է ամսական միջին աշխատավարձի 50%:

44. Միևնյեվ յե՞րբ և կենսաթուակ սրվում ընսանիքի անդամներին:

Կենսաթուակ տրվում և խնդիր տալու որից՝
ա) Անչափահասներին — մինչև 16 տարեկան դասնալը,

բ) Աշխատանքի ընդունակ կնոջը կամ ամուսնուն՝ մինչև յերեխաների 8 տարեկան դասնալը,

գ) Աշխատանքի անընդունակներին — կամ մինչև մահ, կամ թե մինչև բժիշկների հաստատելը, թե նրանք արդեն աշխատելու ընդունակ են:

45. Ի՞նչ փաստաթղթեր են հարկավոր քուակ ստանալու համար:

Կենսաթուակ ստանալու համար ապահովագրական գանձարկիլին պետք և ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1) Մահվան վկայական, կամ՝ դատարանի վորոշում, վոր ընտանիքի կերակրողն անհետ կորել է:

2) Վկայական ծառայության տեղից բոլոր ավյալներով ապահովագրվածի մասին:

3) Վկայական արհեստակցական միությունից, վոր մեռածը, կամ անհետ կորածը 8 տարի ծառայել և վարձով:

4) Միլիցիայից վկայական, ուր գրված պետք և լինի մեռածի, կամ անհետ կորածի ընտանիքի մնացած անդամների ազգանունը, անունը և հոր անունը, նրանց տարիքը, ապրելու մշտական վայրը, պարապմունքը՝ ընտանիքի ամեն մի անդամի յեկամուտը և յեկամտի

աղբյուրները և թե ընտանիքի անդամներից վորո՞նք են անսպասարկ մեռածի, կամ անհետ կորածի հաշվին:

5) Յեթև մեռածի ընտանիքի անդամներն ամեն ամիս կենսաթուակ են ստանում, պետք և ներկայացնեն ծառայության փաստաթղթեր:

6) Վորբերի տարիքը հաստատվում և ծննդյան վկայականով, վորի մեջ պետք և նշանակված լինի — ծննդյան տարին, ամիսն ու ամսաթիվը:

7) Մեռածի, կամ անհետ կորածի ընտանիքին նպաստ տրվում և ամեն ամիս սկզբից, սահմանված ինվալիդների տոմսերով:

8) Կենսաթուակ ստացող այրին պետք և վկայական ներկայացնել, վոր նա չի ամուսնացել և, յեթև նա կենսաթուակը վորբերի համար և ստանում, վկայական, վոր նրանք կենդանի չեն և չեն տեղափոխված լուսավորության և առողջապահության ժողկոմների հիմնարկություններում:

Ծանոթություն. Յեթև ապահովագրվածի մահից, կամ անհետ կորչելուց հետո յերկու տարվա ընթացքում խնդիր չե տրված, այլևս կենսաթուակ չի նշանակվում:

46. Ո՞վ ունի իրավունք նպաստ ստանալու:

Ի. Նպաստ գործազուրկներին: Գործազրկության առթիվ նպաստ ստանալու իրավունք ունեն այն անձինք, վորոնք չունեն վոչ աշխատավարձ, վոչ առևտուր, գրազմունք, տնտեսություն ուրիշ յեկամուտի աղբյուր, կամ զրկվել են աշխատավարձից հիմնարկության ծառայողների թիվը կրճատելու, կամ հիմնարկության ու տնտեսության փակվելու

պատճառով: Գործազրկութեան նպաստ ստանում են հետևյալ կատեգորիային պատկանողները.

ա) մասնագետ բանվորներն ու բարձրագույն մասնագիտութիւն ունեցող ծառայողները (բժիշկներ, ճարտարագետներ, գյուղատնտեսներ և այլն) — անկախ այն բանից, թե նրանք վճարքան ժամանակ են ծառայել պայմանով յեթե նրանք գրված լինեն աշխատանքի բորսայում գործից զրկվելուց չորս շաբաթվա ընթացքում.

Ծանոթութիւն. Մասնագետ բանվորների առանձին խմբերի նկատմամբ, աշխատանքի շուկայի պահանջի համեմատ, արձանագրվելու չորս շաբաթվա ժամանակամիջոցը կարող է նկատի չառնվել Աշխատանքի Բորսայի Կոմիտեյի և Հանրապետութեան Սոցիալական Ապահովագրութեան Վարչութեան համաձայնութեամբ.

բ) վոչ մասնագետ բանվորները, վորոնք աշխատել են անընդհատ վերջին մեկ տարվա ընթացքում և ծառայողները, վորոնք աշխատել են նույնպես վերջին յերեք տարին, յեթե դրանք բոլորն էլ (գործը թողնելուց հետո չորս շաբաթվա ընթացքում) արձանագրվել են բորսայում.

գ) անչափահաս բանվորներն ու ծառայողները, վորոնք վարձով աշխատելն սկսել են 16 տարեկան հասակից, անկախ այն բանից, թե վճարքան են աշխատել և յեթե նրանք արձանագրվել են գործից զրկվելուց հետո չորս շաբաթվա ընթացքում.

դ) մենակյաց կանայք, վորոնք աշխատել են վարձով (միևնույն է, թե վճարքան), յեթե արձանագրվել են գործից զրկվելուց հետո չորս շաբաթվա ընթացքում.

ե) բոլոր անչափահասները (մինչև 16 տարեկան հասակը), վորոնց թեև աշխատանքի տեսչութիւնն իրավունք է տվել աշխատելու, բայց հետո հանվել են գործից, արդյունաբերութեան ֆնասակար աղղեցութեան կամ այլ պատճառով, յեթե այդ ձևով գործից զրկվելուց հետո արձանագրվել են չորս շաբաթվա ընթացքում.

զ) կարմիր բանակից դեմոբիլիզացիայի յենթարկված, կամ մշտապես արձակուրդ ստացածները, յեթե մինչև զինվորական ծառայութիւն մտնելն աշխատել են վարձով (միևնույն է, թե վճարքան ժամանակ) և յեթե դեմոբիլիզացիայից, կամ մշտապես արձակուրդ ստանալուց հետո չորս շաբաթվա ընթացքում արձանագրվել են բորսայում.

ը) 4-րդ և 5-րդ խմբին պատկանող ինվալիդները (անկախ վարձով աշխատելու տեղութիւնից), նույնպես և պատերազմի ինվալիդները (վորոնք զինվորական ծառայութիւն մտնելուց անմիջապես առաջ աշխատել են վարձով), յեթե գործից զրկվելուց, կամ ինվալիդ ճանաչվելուց հետո չորս շաբաթվա ընթացքում արձանագրվել են աշխատանքի բորսայում:

Ծանոթութիւն 1. Այս ցուցակի ա. կետի համաձայն) նպաստ ստանալու իրավունք ունեցողների համար, վորոնք դպրոցը թողել են ավարտման, կամ այլ պատճառով, աշխատանքի բորսայում արձանագրվելու ժամանակը հաշվում է դպրոցը թողնելու օրից:

Ծանոթութիւն 2. Հիվանդութեան պատճառով գործից զրկված բանվորների ու ծառայողների համար աշխատանքի բորսայում արձանագրվելու ժամանակը հաշվում է առողջանալու օրից:

47. Գործազրկության նպաստի չափը:

Գործազրկութեան առթիւ նպաստ տրվում է հետևյալ չափով.

ա) Մասնագետ բանվորներին, վորոնք իրենց աշխատանքի վերջին տեղում ստանալիս են յեղել տարիֆային շարքի 6-րդ և ավելի բարձր կարգով.

բ) Կարմիր բանակից և նավատորմից ղեմօրինիչացի յենթարկված, կամ մշտապես արձակուրդ ստացածներին.

գ) Բարձրագույն մասնագիտութեան տեր, մտավոր աշխատանքով ապրող և համապատասխան կրթութիւն ունեցողներին. որինակ — ճարտարագետներին, գյուղատնտեսներին, բժիշկներին, մանկավարժներին և այլն վճարվում է ամսական միջին աշխատավարձի կեսը և

դ) նացած բոլոր գործազուրկներին ամսական միջին աշխատավարձի մի յերրորդը:

Ծանոթութիւն. Հանրապետութեան սոցիալական ապահովագրութեան վարչութեան թույլտվութեամբ, կարելի յէ նպաստ տալ ամսական միջին աշխատավարձի կեսի չափ նաև այն մասնագետ բանվորներին, վորոնց անտեսութեան առանձին ճյուղերում թույլատրելի յէ վճարել նաև տարիֆային շարքի 6-րդ կարգից ցածր ոտձիկ, բայց, համենայն դեպս, վոչ 4-րդ կարգից ցածր:

ե) Որական նպաստի չափը վորոշելու համար, պետք է ամսական նպաստը բաժանել 24-ի:

48. Վճարման ժամանակ և սրվում նպաստ:

Գործազուրկներին նպաստ տրվում է աշխատանքի բորսայում արձանագրվելու որից (արձակման հա-

շիվը ստանալուց հետո) մինչև գործ գտնելը, սակայն տարեկան միայն վեց ամսվա ընթացքում:

Առանձին դեպքերում սոցիալական ապահովութեան կոմիտեներն իրավունք ունեն երկարացնելու գործազրկութեան առթիւ նպաստ տալու ժամանակամիջոցը:

Ծանոթութիւն. Վեց ամսվա ժամանակամիջոցը հաշվում է նպաստ նշանակելու որից, իսկ ժամանակավոր ընդհատումները վեց ամսվա հաշվի մեջ չեն մըտնում:

49. Ի՞նչ վնասաթղթեր պէտք է ներկայացնել գործազրկության առիթով նպաստ ստանալու համար:

Բոլոր գործազուրկները պետք է ներկայացնեն զանձարկղին իրենց վերջին ծառայութեան տեղից վրկայութիւն, թէ ինչո՞ւ և յե՞րբ են արձակվել գործից, տարիֆային վճի կարգին են պատկանել և վճիքան ժամանակվա արձակուրդային կոմպենսացիա ստացել: Բացի դրանից բարձրագույն մասնագիտութիւն ունեցող ծառայողները պետք է ներկայացնեն իրենց վկայագրերի պատճենները: 16 տարեկան հասակից աշխատող անչափահաս բանվորները պետք է ներկայացնեն ապացույց, վոր իսկապետ 16 տարեկան հասակից վարձով են աշխատել:

Մեկ տարուց պակաս աշխատած մենակյաց կանայք, վորոնք 8 տարեկանից փոքր յերախաներ ունեն, ներկայացնելու յեն յերեխաների ծննդյան վկայականները:

Կարմիր բանակից արձակվածները պետք է ներկայացնեն փաստաթղթեր, զորակոչի յենթարկվելուց առաջ վարձով աշխատելու մասին և տեղեկութիւն, վոր

զինվորական ծառայութեանից ազատվելուց հետո 4 շաբաթվա ընթացքում արձանագրվել են աշխատանքի բորսայում:

4-րդ և 5-րդ խմբի ինվալիդները պետք է ներկայացնեն սոցիալական ապահովում նշանակող հանձնաժողովին տեղեկութուն, վոր նրանք այդ յերկու խմբից մեկին են պատկանում:

50. Ժամանակավոր աշխատանքի անընդունակության յեվ լրացուցիչ նպաստներ:

ա) Ժամանակավորապես աշխատանքի անընդունակ գործազուրկները ստանում են իրենց հասանելիք նպաստը, անկախ սահմանված վեց ամսվա ժամանակամիջոցից, մինչյեվ առողջանալը, կամ վորպես ինվալիդ նանաչվելը:

բ) Գործազուրկության նպաստ ստանալու իրավունք ունեցող հղի ու ծննդկան կանայք (անկախ նրանից, թե նպաստ ստացողներին վոր կարգին են պատկանում) գործազուրկության առթիվ նպաստ ստանում են մասնագետ բանվորներին նշանակված նպաստի չափով, վեց շաբաթ ծննդաբերութեանից առաջ և վեց շաբաթ հետո, յեթե նույնիսկ գործազուրկներին նպաստ տալու համար սահմանված վեց ամսվա ժամանակամիջոցն անցած լինի:

գ) Յերեխային խնամելու և կերակրելու լրացուցիչ նպաստ ստանալու իրավունք ունեն ինչպես գործազուրկները, վորոնք այդ առթիվ նպաստ են ստանում, այնպես էլ նրանց կանայք, ընդհանուր հիմունք-

ներով, բոլոր ապահովագրածների պես, աշխատանքի որենքների 183-րդ հոդվածի համաձայն:

դ) Նպաստ ստացող գործազուրկների և նրանց ընտանիքների աշխատանքի անընդունակ անդամների (գործազուրկի հաշվին ապրող) թաղման համան նրպաստ տրվում է ընդհանուր հիմունքներով, բոլոր ապահովագրվածների պես, աշխատանքի որենսպրքի 184-րդ հոդվածի համաձայն:

ե) Բ, Գ յեվ Դ կետերում հիշված գործազուրկները նպաստ ստանում են յեվ այն դեպքում, յեթե նպաստ ստանալու համար սահմանված վեց ամսվա ժամանակամիջոցն անցնելու հետյեվանքով այդ իրավունքից զրկվել են:

51. Նպաստ նւանակելու յեվ սալու կարգը:

1) Գործազուրկներին նպաստ տրվում է աշխատանքի բորսային կից ապահովագրական գանձարկզի կայանի միջոցով:

Ժամտթուլթյուն. Յեթե ապահովագրական գանձարկզը մտտ է աշխատանքի բորսային, կարելի յե վըձարող կայաններ չը կազմակերպել, իսկ ուր աշխատանքի բորսա չկա, ապահովագրական գանձարկզը թե արձանագրում է գործազուրկներին և թե նպաստներ տալիս:

2) Գործազուրկի նպաստ ստանալու իրավունքը վորոչևու, արտոնութեուն տալու և համապատասխան կատեղորիայով ցուցակագրելու գործը վարում է ապահովագրական գանձարկզի հատուկ հանձնաժողովը: (Աշխատանքի բորսային կից): Այդ հանձնաժողովն են մըտնում աշխատանքի բորսայից, սոցիալական ապահովա-

գրութեան գանձարկղից և միջմիութենական մարմնից մեկական ներկայացուցիչ:

3) Նպաստ ցանկացող գործազուրկները պետք է խնդիր ներկայացնեն նպաստամատուց հանձնաժողովին, ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

ա) Գործազրկութեան տոմս.

բ) Հաշվետեար, կամ վկայական վերջին ծառայութեան, կամ աշխատանքի տեղից, վորի մեջ պետք է գրուված լինի. 1. պաշտոնն ու արհեստը, 2. արձակելու ժամանակը, 3. մինչև ամսի քանիսն է բավարարված աշխատավարձով, 4. վերջին աշխատանքի տեղազրկումը և 5. տարիֆային շարքի կարգը:

գ) Փաստաթուղթ, թե ընդամենը ինչքան ժամանակ է աշխատել վարձով:

դ) Միլիցիայի, կամ համապատասխան կազմակերպութեան վկայական այն մասին, վոր գործազուրկին ապրուստի մոշ մի միջոց չունի, որինակ՝ աշխատավարձ, առևտուր, զբաղմունք, անտեսութիւն և այլն:

ե) Բացի գրանից հարմիր Բանակից զեմբրիլի-գացիայի յենթարկված, կամ մշտապես արձակուրդ ստացած գործազուրկները ներկայացնում են զինվորական վարչութիւնից ստացած անձնագիր, ինվալիդները — ինվալիդային այս, կամ այն խմբին պատկանելու վկայական, իսկ մենակյաց կանայք՝ տեղեկութիւն իրենց ընտանեական գրութեան մասին:

զ) Հանձնաժողովը նպաստ տալու հարցը քննում է մի շարքաթվա ընթացքում: Նպաստի իրավունք տալու դեպքում, հանձնաժողովը գործազուրկին տալիս է «Գործազուրկի թերթիկ» նպաստ սպանալու համար,

իսկ տոմսի վրա նշանակում է, թե վորքան նպաստ է նշանակվել:

Ծանոթութիւն. Գործազուրկին նպաստ նշանակվում է խնդիր տալու որից, բայց 48-րդ հոդվածի սահմաններում:

ր) Ապահովագրված գործազուրկը պարտավոր է սահմանված որերին ներկայացնել աշխատանքի բորսային «Գործազուրկի թերթիկը» ստուգման, թե արդեօք, նա սահմանված որերին հաճախել է բորսան և չի հրաժարվել առաջարկած աշխատանքից առանց հարզելի պատճառի:

Գործազուրկի թերթիկն առանց այդ նկատողութիւններին ուժ չունի:

Նպաստ ստացող գործազուրկին ժամանակավոր աշխատանքի ուղարկելիս, «թերթիկը» վրա նշանակվում է, թե վորքան ժամանակ է աշխատել:

ը) Նպաստ ստանալու համար, «թերթիկն» ապահովագրական գանձարկղին ներկայացնելիս, գործազուրկը պարտավոր է հայտնել իր հասցեն, յեկամուտի չափն ու կողմնակի աշխատավարձը, յեթե նա այդ ունեցել է գործազրկութեան շրջանում:

թ) Ապահովագրական գանձարկղը կասկածելի դեպքում, 3 որվա ընթացքում քննութեան է յենթարկում գործազուրկի գույքն ու նյութական գրութիւնը և ըստ այն վճռում նպաստ տալու հարցը: Յեթե այդ 3 որվա ընթացքում գործազուրկի գույքն ու նյութական գրութիւնը չի հաշողվում պարզել՝ նպաստը արվում է առանց քննութեան:

ժ) Գործազուրկներին նպաստ արվում է ամիսը 2

անգամ, իսկ յեթե տեխնիքական պայմանները թույլ
չեն տալիս՝ ամենաուշը ամիսը մեկ անգամ:

52. Գործազուրկները վճար դեպքում են գրկվում
ևսպաս յեվ արճնուրթյուն ստանալու իրավունքից:

Գործազուրկը գրկվում է նպաստ և արտոնու-
թյուն ստանալու իրավունքից հետեյալ գեպքերում.

ա) Յերբ աշխատանքի բորսայում ցուցակից հան-
վում է, առանց հարգելի պատճառի, սահմանված ժա-
մանակին չը ներկայանալու հետեանքով:

բ) Յերբ առանց հարգելի պատճառի հրաժար-
վում է աշխատանքի բորսայի առաջարկած գործից:

գ) Յերբ քննությունը յերեան է հանում, վոր
գործազուրկն ունի քիչ, թե շատ հաստատուն կող-
մնակի աշխատավարձ, կամ յեկամուտ:

դ) Յերբ պարզվում է, վոր գործազուրկը սխալ
տեղեկություններ է տվել և այդ հիման վրա հանձնա-
ժողովը սխալ յեզրակացություն է հանել:

Փանթութում. Գործազուրկի բորսան չըներ-
կայանալու և առաջարկած գործից հրաժարվելու դեպ-
քերը (առանց հարգելի պատճառների) նախատեսնված
են Աշխատանքի ժողովրդական Կոմիսարիատի հրա-
հանգներում:

Այս հոդվածի «ա» և «բ» կետերում հիշած գոր-
ծազուրկներին ցուցակից հանելու մասին, աշխատանքի
բորսան, իսկ պետք յեղած դեպքում նաև նպաստա-
մատուցց հանձնաժողովը, իսկույն հայտնում են ապա-
հովազրական գանձարկղին:

Նպաստ ստանալու համար խնդիր տվող և արդեն
նպաստ ստացող գործազուրկների նյութականի մասին

քննություն կատարում է ապահովազրական գանձար-
կղը:

Յեթե հանձնաժողովը մերժում է նպաստ նշանա-
կել վորևե մեկին, գործազուրկները կարող են դիմել
զավառային աշխատանքի բաժնին, իսկ կենտրոնում՝
հանրապետության սոցիալական ապահովազրության
վարչության, վորոնց կայացրած վորոշումը վերջնա-
կան է:

53. Լրացուցիչ կանոն:

1) 47-րդ հոդվածի «ա» կետում հիշված գործա-
զուրկներն իրավունք ունեն արտոնություններից ոգ-
տվելու՝ աշխատանքի ժողկոմի վորոշումներում հայտա-
րարված կանոնների համաձայն:

2) Այն պաշտոնյաները, վորոնք գիտությամբ
կեղծ վկայություն են տալիս գործազուրկի նյութական
դրության, ծառայության մասին և այլն, պատաս-
խանատու յեն ժողովրդական դատարանի առջև քրեա-
կան որենսգրքի 116 հոդվածի համաձայն, ինչպես զեղ-
ծարար անձինք:

3) Այն գործազուրկները, վորոնք գիտավորյալ
կերպով սխալ տեղեկություններ են ներկայացնում ի-
րենց մասին, ցանկանալով ապորինի կերպով նպաստ
ստանալ՝ պատասխանատուության են յենթարկվում
Քրեական որենսգրքի 90 հոդվածի համաձայն:

Վերջացնելով տեղեկատվի ընթերցումը, Դանեյանը
Քիչ ջուր խմեց, բստ սովորականի լուռ քայլեց բեմի
վրայ և շարունակեց:

Այսպիսով, ընկերներ, ինչպես տեսնում եք, սոցիալական ապահովագրութեան որենքը համարյա լիովին բավարարում է բանվոր դասակարգի բոլոր պահանջները, վորոնց համար մենք պայքարել ենք շատ ու շատ տարիներ և վորոնց համար մենք այնքան զոհեր ենք տվել:

Իմ զեկուցումը, ընկերներ, շատ յերկարեց և ձեզանից շատերը, յես տեսնում եմ, հուշեցին: Յես շուտով կը վերջացնեմ:

— Խնդրում ենք, ինդրում ենք, Դանելյան, խոսիր, լավեցին ուժեղ ձայներ:

— Քիչ բան մնաց ասելու ձեզ, ընկերներ, յես ուզում եմ մի քանի խոսք ասել բժշկական ոգնութեան մասին:

Ս. պատիվագրական գանձարկներն ու բրձեկական ոգնությունը բանվորներին:

— Ընկերներ, ով վոր, քիչ թե շատ, լուրջ մտածի սոցիալական ապահովագրութեան գործի մասին, նա կը հասկանա, վոր այդ գործում գլխավոր դեր խաղում

է ծրի բժշկական ոգնութեանը: Յերբ վոր մարդու ձեռքը, վորքը, գլուխը, կամ մարմնի ուրիշ վորևէ մասը ցավում է, նա այդ ժամանակ նպաստի մասին քիչ է մտածում: Նրա համար կարևոր է ցավից ազատվել: Նրա համար գլխավորը բժշկվելն է, իսկ նպաստի մասին նա հետո կը մտածի:

Գանձարկին ամենից շատ շահագրգռված է, վոր լավ բժշկի ապահովագրվածներին: Չե՞ վոր քանի լավ են բժշկում բանվորին, այնքան շուտ է առողջանում նա և գանձարկին էլ, հիվանդութեան որերի հա-

մար, քիչ վճարում: Ընդհակառակը՝ քանի վատ են բժշկում բանվորին, այնքան յերկարում է նրա հիվանդութեանն և այնքան էլ գանձարկը ստիպված է լինում ավելի ծախսել, նպաստ տալ հիվանդին:

Անհրաժեշտ է վոչ միայն բժշկել բանվորներին, կազմակերպել հիվանդանոցներ և այլն, անհրաժեշտ է գլխավորապես կովել վոչ միայն այն հիվանդութեան դեմ, վորն արդեն ձանկել է բանվորին, այլ և այն հիվանդութեան դեմ, վորը դեռ չի հասել նրան:

Վերցնենք, որինակ, սե կամ իսկական ծաղիկը: Ամեն մարդ կարող է լիովին անփնաս դարձնել այդ հիվանդութեանն իր համար, յեթե ժամանակին պատվաստվի: Նույնպիսի պատվաստ են գործածում նաև ուրիշ հիվանդութեանների դեմ — խոլերայի, վորոք վայնի տիֆի և այլն: Նշանակում է գանձարկը պետք է հողա վոչ միայն այդ հիվանդութեաններով վարակված բանվորին նպաստ տալու մասին, այլ և ամեն միջոցներ պետք է ձեռք առնի մյուս առողջ ապահովագրվածներին ազատելու վարակումից, ժամանակին պատվաստելով և բացատրելով բանվորներին պատվաստի անհրաժեշտութեանը, վորովհետև շատերը, հաճախ, վախենալով պատվաստից խուսափում են:

Հիմա վերցնենք ուրիշ հիվանդութեան՝ թորախալը: Ի՞ժիշկներն ապացուցել են, վոր այդ հյուրն ամենից հաճախ այցելում է բանվորներին և այն բանվորներին, վորոնք ստիպված են աշխատելու փոշու մեջ: (Նրա պատճառներն յես առջ ասել եմ): Նշանակում է, յեթե գանձարկին ուզում է իր անդամներին թորախալից ազատել, նա վոչ թե պետք է ապահովի միայն թորախալվորներին, այլ և պետք է ստիպի գործատե-

րերին և գործարանների ու արհեստանոցների վարչություններին ձեռք բերել փողի ծծող գործիքներ և առհասարակ միջոցներ ձեռք առնել, արհեստանոցներում մաքրություն պահպանելու և այլն:

Յես կարող եի ձեզ շատ որինակներ բերել, բայց իմ զեկուցումն առանց այն ել յերկարեց: Կարծում եմ, վոր ձեզ համար ել ցերեկվա պես պարզ ե, վոր դրամական նպատան ու բժշկական ոգնությունը մեծ կապ ունեն իրար հետ (Ձե վոր անապահով, քաղցած բանվորին բժշկելը զուր աշխատանք ե: Քաղցած մարդու փորն ինչքան ուզես լցրու զեղով — չի առողջանա):

Հին կառավարութեան որով և բուրժուական յերկրներում, ինչպես յես ասացի, մենք պահանջում եինք, վոր բանվորների բժշկութեան ամբողջ գործը հանձնվի հիվանդանոցային գանձարկղներին, ինչպես բանվորութեան ամենամտու կազմակերպութեան:

Ներկայումս, որենքով, ապահովագրածները ձրի բժշկութեան իրավունք ունեն և այդ գործը գտնվում ե ժողովրդական Առողջապահութեան Կոմիտայի բաժնի ձեռքում: Բայց, վորպեսզի ապահովագրածներին բժշկելու գործը լավ հիմքերի վրա լինի դրված, վերջինս առանձնացրած ե ընդահանուր գործից:

Կենտրոններում առողջապահութեան ժողովուն կից և գավառներում առողջապահութեան բաժիններին կից գոյություն ունեն ապահովագրածներին բժշկական ոգնություն ցույց տվող յենթարածիններ, վորոնք վարում են բանվորներին ու ծառայողներին բժշկելու և գեղորայքով ոգնելու գործը:

Յեթե այս գործը գտնվում ե յենթարածինների ձեռքում, դա զեռ չի նշանակում, վոր գանձարկղներն

այդ պատճառով պետք ե հետու կենան ու չը խառնվեն բանվորներին բժշկելու գործին: Ընդհակառակը՝ նրանք պետք ե ամենաակտիվ մասնակցություն ցույց տան բանվորներին բժշկելու գործում և պետք ե ձգտեն, վոր բանվորները փաստորեն, ստանալու լինեն բժշկական և գեղորայքի ձրի ոգնություն, վոր այդ ոգնությունը, վորքան կարելի յե, լավ լինի կազմակերպված, մոտ լինի բանվորներին և այլն:

Ահա այն բոլորը, ինչ վոր այդ առթիվ ուզում եի ասել:

Ընկերներ, բանվորների բուժման ու ապահովման գործն արժանի բարձրութեան վրա դնելով՝ մենք կուր բանակով կը շարժվենք բանվոր դասակարգի վաղեմի թշնամիներ զեմ — հիվանդութեան, հաշմանդամութեան և այլ դժբախտությունների զեմ և յես հավատացած եմ, ընկերներ, մենք կը կարողանանք նրանց հաղթել: Դանելյանը վերջացրեց:

Ուժեղ «կեցցե»-ներն ու հավանություն արտահայտող բացականչությունները ցույց տվին զեկուցողին, վոր նա, լողներ յըտից եր խոսում:

— Արդյոք վոչ վոք չի ցանկանում զեկուցման առթիվ արտահայտվել — զիմեց նախագահը ժողովականներին, յերբ ծափահարությունների ու բացականչությունների աղմուկը մի քիչ դադարեց:

— Խնսք տվեք լավեց ձուրդ Ասեի փոխանակութեանը: Հովհաննիսյանի ձայնը, վորը մի ժամանակ, հին կառավարութեան որով, աշխատել և հիվանդանոցային գանձարկղում:

— Համեցեք այստեղ, ընկեր Հովհաննիսյան, բեմ բարձրացեք — դիմեց նրան նախագահը:

— Զե, յես եստեղից կը խոսեմ... Սովոր չեմ բեմից խոսելու, իմ ձայնն եստեղից ել կը լսվի... Ընկեր նախագահն առաջարկում է արտահայտվել Դանելյանի գեկուցման առթիվ: Ել ի՞նչ արտահայտվել: Դանելյանն ենպես կարգին ամեն ինչ հալեց ու լցրեց, վոր ել ավելացնելու բան չմնաց: Յես ուզում եմ միայն մի քանի առաջարկութուն անել, վորոնք, իմ կարծիքով, պետք է վոր ընդունվեն:

Իմ առաջին առաջարկութունն է, հաստատել ապահովագրական գանձարկղների կազմակերպման վերաբերող սրենքը, այսինքն՝ ճանաչել, վոր այդ գործը մեր բանվոր մարդու համար ոգտակար է և վոր, որքան, բանվորներն այդ զգալով, միահամուռ կաշխեն գանձարկղներ կազմակերպելու գործին:

— Քվեարկում եմ այդ առաջարկութունը — դիմեց նախագահը ժողովին: Ո՞վ է ցանկանում հակառակ արտահայտվել: Ցանկացողներ չկան: Քվեարկում եմ: Ո՞վ է առաջարկության կողմնակից: Ո՞վ է հակառակ: Ընդունվում է միաձայն:

— Իմ յերկրորդ առաջարկութունն այս է. թիկմենք վստահում ենք մեր գործկոմին և արհեստակցական միության, բայց և այնպես յես առաջարկում եմ, վոր, յերբ ապահովագրական գանձարկղի համար ներկայացուցիչներ ընտրելու պետք լինի, այդ հարցն անհրաժեշտ է զնել ընդհանուր արհեստակցական միության կոնֆերենցիային, վորն և իրավունք ունի ապահովագրական գանձարկղի կոմիտե ընտրելու:

— Առարկող չկան, ընկերներ — դիմեց նախագահը ժողովին: Ընդունվում է:

— Բժշկական ոգնության մասին յես հիմա վոչինչ չեմ ասի: Սուայժմ քաղաքային ատղջապահական բաժինը թող աշխատի գանձարկղի հսկողության տակ, թեև, ճիշտ պետք է խոսել, առանձնապես լավ չի աշխատում, բանվորները շատ են գանդատվում նրանից: Վոչինչ, ապրենք, ծամենք ծամծամենք, տեսնենք գործն ինչպես կերթա: Գանձարկղն, իհարկե, պետք է ամենաթունդ աշխատանքի ուղին և ծուծը դառնա: Մեզանից ամեն մեկը, իհարկե, հասկանում է, վոր բուժվելու ամենագլխավոր բանն է. դրամական նպաստը դատարկ բան է, գլխավորը, իհարկե, բուժին է:

Ամեն կողմից աղմկեցին:

— Ճիշտ է ասում, ուղիղ է: Նպաստն ինչ է. նըպաստ յես ել կը տամ քեզ... Իու բժշկիք ինձ, յերբ հիվանդ եմ, իսկ նպաստն ինչ... Յես անցյալ անգամ յերեք շաբաթ ընկած եի անկողնում, կանչեցի պետական բժշկին, կանչեցի՝ չեկավ: Ստիպված յեղա վողով մասնավոր բժիշկ կանչել. ահա քեզ նպաստ: պայթեց, գընաց...

— Ասում եմ, կապրենք, կը տեսնենք — լավեց Հովհաննիսյանի հանդարտ ձայնը: Այդ գործն, իհարկե, պետք է մանրամասն քննել. գուցե իսկապես հիմա գեռ շուտ է խոսել գանձարկղներին հանձնելու մասին... Լսվ, կը նայենք:

— Ընկերներ, թույլ տվեք մի վերջին առաջարկութուն ել անել — շարունակեց Հովհաննիսյանը, վորքն, յերևում է, ճանճ չեր վորսում Դանելյանի գեկուցման ժամանակ:

— Կարծում եմ, վոր դրա դեմ ել վոչ վոք չի առարկի: Դանելյանի բանը լավ ե. հավաքել և լրագիրներ, ժողովածուներ, շարաթաթերթեր և վարպետորեն իրեն համար նպաստների մասին տեղեկատու ե կադմել: Նրա համար լավ բան ե, վոր ցարական բանտերում, ընկերների ոգնությամբ, զարգացած մարդ և դարձել: Իսկ յես, ահա, շատ ուշադիր լսեցի Դանելյանի զեկուցումը, բայց մի հարցրեք ինձ, թե ի՞նչ նրպաստ ե սահմանված այս ինչ դեպքում, ի՞նչ փաստաթուղթ պետք ե ներկայացնել գանձարկղին, վորպեսզի մարդ ստիպված չլինի մի քանի անգամ գնալ դալու, կուզեք սպանեցեք, չգիտեմ: Մեզ պես մարդիկ միթե կարող են հիշել այդ բոլորը: Յեղ ահա յես առաջարկում եմ, պահանջել գանձարկղից՝ շուտով հրատարակել Դանելյանի տեղեկատուն, կամ դրա նման մի ուրիշը, վորպեսզի ամեն հիմնարկության մեջ, գործկոմում անպայման լինի ապահովագրական տեղեկատու: Մենք նույնիսկ հին ժամանակ ձրի բաժանում եինք այդպիսի գրքույկներ, ուր տպված եին լինում մասնակցողներին վերաբերող բոլոր կանոնները: Իսկ յեթե գանձարկղը դեռ կարողություն չունի ձրի բաժանելու՝ թող փողով ծախի, բոլորն ել կառնեն, վորովհետեւ բոլորը պետք ե գիտենան իրենց իրավունքները: Միթե լավ չեմ ասում, ընկերներ:

— Ճիշտ ե, լավ ես ասում, կեցցես Հովհաննիսյան — լավեցին բացականչություններ:

— Առարկություն չկա՞ — դիմեց նախագահը ժողովին:

— Ընդունվում ե: Ել ուրիշ առաջարկություն չը-

կա: Վոչ վոք չի ցանկանում զեկուցման առթիվ արտահայտվել: Այդ դեպքում ժողովը հայտարարում եմ փակված:

Ժողովականներն ազմկով դիմեցին դեպի դուռ: Մի քանի բուպեյից ահումբի դահլիճը դատարկվեց ու միայն ծխախոտի քուլաներից յերևում եր, վոր քիչ առաջ այստեղ բազմամարդ ժողով ե կայացել:

Իսկ փողոցներում բանվորների խմբերը զվարթ կերպով փոխանակում եին իրենց տպավորությունները Դանելյանի զեկուցման մասին:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ս Ժ

Բժեկական ոգնության սեսակներ:

Ամեն մի ապահովագրած, պետք յեղած դեպքում, ձրիաբար ստանում ե 1) հանկարծակի հիվանդության և դժբախտ դեպքերի ժամանակ բժշկական ոգնություն, 2) ամբուլատորիաներում ամեն մասնագիտության բուժում, 3) մանկաբարձական ոգնություն, 4) ոգնություն տանը, 5) հիվանդանոցում, 6) սանատորիայում և ամարանոցում, 7) դեղորայք և այլն:

Բժեկական ոգնություն ապահովագրվածի քննանիքի անդամներին:

Ձրի բժշկական ոգնություն և դեղորայք ստանում են ապահովագրածի ընտանիքի հետեյալ անդամները:

1) Ապահովագրածի կինը, անկախ նրա աշխատանքի ընդունակ լինելուց:

2) Անչափահաս յերեխաները, յեղբայրները, քույրերը (մինչև 16 տարեկան հասակը), յեթե նրանք ապրում են ապահովագրածի հաշվին:

Ճանոթութիւն: Յեթե յերեխաները, յեղբայրներն ու քույրերը սովորում են դպրոցում և համապատասխան դպրոցական հիմնարկութիւնից չեն ստանում բժշկական ոգնութիւն, այդ դեպքում նրանք այդ ստանում են, վորպես ապահովագրածի ընտանիքի անդամներ, անկախ նրանց տարիքից:

3) Ապահովագրածի աշխատանքով ապրող, թեկուզ աշխատանքի ընդունակ ծնողները (հայր և մայր), յեթե յեկամուտ չունեն:

4) Ապահովագրված կնոջ աշխատանքի անընդունակ ամուսինը:

Յերթեվել հիվանդների բժշկելու կանոններ:

1. Հիվանդացած բանվորը, ծառայողը կամ նրա ընտանիքի անդամն անհրաժեշտ ոգնութիւն ստանալու համար, դիմում և մտտակա հիվանդանոցը (իւր հիմնարկութեան կամ սայոնի):

2. Հիվանդութեան պատճառով գործից դուրս յեկած բանվորներն ու ծառայողները, վորոնք կարիք ունեն յերթեվել բուժարանի ոգնութեան, հերթ պահելու վերաբերմամբ, առաջնութիւն են վայելում:

Ճանոթութիւն: Ապահովագրվածը կարող է բուժվել իւր ցանկացած հիվանդանոցում:

3. Բժշկական ոգնութիւն ստանալու հանար պետք է ներկայացնել ապահովագրական գրքույկ:

Ժու նոթութիւն. Ապահովագրական գրքույկն ուրիշներին տվողները պատժվում են ինչպես զեղծարարներ:

4. Ապահովագրվածներին տրվում է բոլոր մասնագիտութիւններին վերաբերող բժշկական ոգնութիւն:

5. Առանհարուժական ոգնութիւն ստանալուց կացվում է առաջների մաքրելը, հանելը և փչացած առանների ցննելը:

Տակը բժշկական ոգնութիւն ստանալու կանոններ:

1. Գանձարկղի ռայոնական բժիշկն այցելում և բացատրակա ծանր հիվանդներին, վորոնք անկարող են դիմել յերթեվելների բուժարանը:

Ճանոթութիւն: Ռայոնական գանձարկղի բժիշկներն իրենց աներում իրավունք չունեն հիվանդներ ընդունելու բժշկական յենթարածնի հաշվին:

2. Գանձարկղի բժիշկները պարտավոր են բուժել ապահովագրածին և նրա աշխատանքով ապրող ընտանիքի անդամներին տանը, միայն կորոն ստանալուց հետո:

Ճանոթութիւն. Շուտափութ ոգնութիւն պահանջող զեպքերում, որինակ, ուժեղ արյունահոսութիւն, խոշոր այրվածք, թունավորում, ջարդվածք և այլն, վորոնք մահ են սպառնում, բժիշկներն ոգնում են առանց կորոնի: Այդ դեպքում կորոնին ժամանակավորապես փոխարինում է հիվանդի, կամ նրա մտերիների ստորագրութիւնը այցելութեան մասին:

3. Յեթե կորոնը հանձնվել և բժշկին մինչև ցերեկվա ժամը 12-ը, այցելութիւնը մյուս որփան չի կարելի ժամը 12-ը, այցելութիւնը մյուս որփան չի կարելի:

րելի հետաձգել: Կարոնն ուժ ունի յերեք որվա ընթաց-
քում: Դրանից հետո, յերբ հիվանդութունը պարզվում է,
կարոն տրվում է միայն մի այցելութայն համար:

Հիվանդին կարող է այցելել և ուրիշ ուսյոնի
բժիշկ, վերջինի համաձայնությամբ:

4. Հիվանդին բուժում է մեկ բժիշկ, բայց ան-
հրաժեշտ յեղած զեպքում, կարելի յե բժշկական խոր-
հրդակցության հրավիրել յենթարաժնի և ուրիշ բժիշ-
կներին: Խորհրդակիցը հրավիրվում է այցելող բժիշկի նա-
խաձեռնությամբ և համաձայնությամբ:

5. Խոլերա, ամեն տեսակ տիֆ, ժանտախտ, ծա-
ղիկ, գիֆտերիա, սկարլատինա և ուրիշ սուր վարակիչ
հիվանդություն ունեցողներն ուղարկվում են հիվանդա-
նոց:

6. Ոժանդակ բժշկական ոգնություն ցույց են տա-
լիս ուսյոնական ֆելդշերները և մանկարարձուհիները
բժշկի ցուցմունքով:

7. Բժշկին տուն հրավիրելու համար, ապահովա-
գրաժները դիմում են բժշկական ոգնության յենթա-
բաժնին կամ լիազորին՝ համապատասխան փաստա-
թղթով (ապահովագրական գրքույկ):

Հիվանդանոցի կանոններ:

1. Հիվանդանոց պառկելու կարիք ունեցողնե-
րըն ուղարկվում են ապահովագրական գանձարկղի
հիվանդանոցները, յեթե կան այդպիսիք: Հակառակ
զեպքում, խորհրդային հիվանդանոցները պարտավոր են
առաջին հերթին ապահովագրած հիվանդներին ընդու-
նելու:

2. Ծանր հիվանդին տեղափոխելու համար տրվում

և Շուտափույթ Ոգնության կառք: (Յեթե կան այդպի-
սի կառքեր):

3. Ծննդկաններին ուղարկում են հատուկ Ծնըն-
դարեքական տներ:

Ծանոթություն. Ծննդաբերության որը ծննդկա-
նին կարելի յե հիվանդանոց ընդունել ապահովագրա-
կան գրքույկով, իսկ հաջորդ որն այդ մասին պետք է
հայտնել բժշկական յենթաբաժնին և ըստ հերթա-
պահ բժշկի վկայության, թուղթ վերցնել ապահովա-
գրական գանձարկղի հաշվին բուժվելու համար:

4. Ամեն մի ապահովագրված պետք է հիշի իր ու-
սյոնի բժշկի ու մանկաբարձուհու հասցեն, վոր շուտա-
փույթ ոգնության կարիք յեղած զեպքում կարողանա
նրան դիմել:

(Այդ մասին կարելի յե տեղեկանալ ապահովա-
գրաժներին բժշկական ոգնություն ցույց տվող յենթա-
բաժնում և ապահովագրական գանձարկղում):

Բոլոր թյուրիմացությունների մասին պետք է
անհապաղ հայտնել ապահովագրական գանձարկղին և
բժշկական յենթաբաժնին:

Դեղ ստանալու կարգը:

Յեթե հիվանդը, բացի բժշկական խորհրդից ունի
նաև զեղի կարիք, պետք է հիվանդանոցից կամ յապա-
հովագրական գանձարկղից ստանա զեղատոմս (Բժշկա-
կան յենթաբաժնի կնիքով) և դիմի խորհրդային վորեն
զեղատուն, բժշկական յենթաբաժնի հաշվով ձրի զեղ
ստանալու համար:

Ծանոթություն. 1. Մասնավոր բժիշկների զեղա-
տոմսերի համար յենթաբաժինը չի վճարում:

2. Գանձարկղի բժիշկներն իրավունք չունեն արտագրել կամ ստորագրել ուրիշ բժիշկների զեղատուսերը:

Փամանակավորապես աշխատանքի անընդունակ ապահովագրածներին գործից ազատելու կարգը:

1. Հիվանդութեան պատճառով գործից ազատվելու կարիք ունեցող բանվորը կամ ծառայողը պետք է վերջինի իրեն բժշկող ապահովագրական գանձարկղի բժշկից հատուկ վկայական (բժշկական յննթարածնի կամ ամբուլատորիայի կնիքով), ուր պետք է նշանակված լինի հիվանդութեանն ու աշխատանքի անընդունակ դասնալու առաջին օրը:

2. Բժշկի այն վկայականը, վերով բանվորը կամ ծառայողը գործից ազատվում է, պետք է ներկայացնել գործկոմիին, տեղկոմիին կամ ծառայած հիմնարկություն: Միայն այդ վկայականի համաձայն է հիմնարկությունը տալիս բյուլետեն:

Ծանոթություն: Բանվորի կամ ծառայողի ընտանիքի անդամին յերբեք բյուլետեն չի տրվում: Բյուլետենը չի կարող ծառայել վորպես վկայական, բժշկական ոգնություն ստանալու համար:

3. Իրանից հետո բյուլետենը ներկայացվում է բժշկին (հիվանդին նայելու օրից 3 օրվա ընթացքում), հաստատելու համար: Բժիշկն առաջին յերեսին նշանակում է հիվանդության անունը և հնարավոր յեղած գեպքում, հիվանդության առաջ գալու պատճառը:

Յեթե բանվորի ջարդվելը վիրավորվելը և այլն կապ ունինրա արհեստի հետ, անհրաժեշտ է հիվանդության անվան հետ հիշել նաև արհեստի հետ յեղած այդ կա-

պը: Համապատասխան հարցի դիմաց պետք է գրվի տանկրով աշխատանքի անընդունակութեան առաջին օրվա ամսաթիվը, բայց առանց ստորագրության, իսկ ցածում՝ բժիշկն ամեն օր ստորագրում է գործից ազատելը:

Բժշկի ստորագրութեամբ գործից ազատվում են մի անգամից՝ յերթեկ հիվանդներն յերեք, իսկ պատկած հիվանդները՝ յոթն օրից վոչ ավելի: Իրանից առաջ գործից ազատելու համար տված վկայականը վոչ նշացվում է: Անհրաժեշտ յեղած գեպքում, այսինքն, յեթե հիվանդութեանն յերկարում է, բժիշկը, քննելուց հետո, նույն բյուլետենի վրա և նույն յերեսին ստորագրում է նույն ժամանակամիջոցով գործից ազատելը: Այսպես շարունակվում է մինչև հիվանդի առողջանալը կամ՝ բյուլետենի փոխելը, յեթե հիվանդը ցանկանում է նոսր նպաստ ստանալ:

Յեթե տված առաջին ժամանակամիջոցից հետո բանվորն առողջանում է, բժիշկը բյուլետենի առաջին յերեսին «աշխատանքի ընդունակ է» խոսքերի դիմաց գրում է այն օրվա ամսաթիվը, յերբ բանվորը գործի պիտի գնա և ստորագրում է: Իսկ յեթե հիվանդությունը շարունակվում է, հիվանդության առաջին օրվա ամսաթիվի դիմաց, նշանակում է վերջին քննության ամսաթիվը (աշխատելով բյուլետենի փոխելը հարմարեցնել թիվը (աշխատանքի ընդունակ է) գրում 15-ին և 30-ին): «աշխատանքի ընդունակ է» գրում ամսի 15-ին և 30-ին): «աշխատանքի ընդունակ է» խոսքերն ու ված տողում, ընդգծում է «դեռ հիվանդ է» խոսքերն ու ստորագրում: Նոր բյուլետենի վրա յել, բիշկը շարունակում է նշանակել աշխատանքից ազատելու ամսաթիվը, սկսած հիվանդի նպաստ ստանալու հետևյալ օրից:

Ծանոթություն 1: Չպետք է մոռանալ, վոր

բյուլլետենը կարևոր փաստաթուղթ է, վորով հիվանդն ապահովագրական գանձարկղից դրամական նպաստ է ստանում, իսկ նպաստը փոխարինում է հիվանդի ուձիկը, վորից նա զրկվում է հիվանդութան միջոցին: Այդ պատճառով բժիշկները պետք է ուշադիր, ճշտապահ և զգուշ լինեն հիվանդի աշխատանքի անընդունակութան ամսաթիվը նշանակելիս, հիշելով, վոր յերբեք չի կարելի բյուլլետենը ստորագրել հիվանդի բացակայութեամբ, հին ամսաթիվով կամ՝ ապագայի համար 3-ից 7-որ ավելի ժամանակով:

2. Բյուլլետենով աշխատանքից ազատվում են բոլոր ժամանակավորապես աշխատանքի անընդունակ հիվանդները, վիրավորները, հղիները, ծնդկանները:

4. Հղիներին ու ծննդկաններին աշխատանքից ազատում են ապահովագրական գանձարկղի, ծննդաբերական հիմնարկութունների մանկաբարձ բժիշկները՝ սովորական կարգով:

5. Ապահովագրական գանձարկղի ֆիզիքական աշխատանքով զբաղվող հղի ու ծննդկան անդամներն աշխատանքից ազատվում են ծննդաբերութունից ութ շաբաթ առաջ և ութ շաբաթ հետո, իսկ մտավոր աշխատանքով զբաղվողները՝ վեց շաբաթ առաջ ու վեց շաբաթ հետո:

Ժամնոթուլթյուն 1. Այն հղիները, վորոնք աշխատանքից ազատվել են սահմանված ժամանակից (8 կամ 6 շաբաթ) ուշ, դրա փոխարեն ծննդաբերութունից հետո չեն կարող աշխատանքից ազատվել 8 կամ 6 շաբաթից ավելի: Այս կարգադրութունը պետք է

ստիպի կանանց, իրենց և յերեխաների առողջութեան ոգտին, ժամանակին թողնելու աշխատանքը:

2. Յեթե հղի կամ ծննդկան կինն, աշխատանքից ազատվելու համար սահմանված ժամանակից դուրս հիվանդանալու լինի, ազատվում է ինչպես հիվանդ, սովորական կարգով:

3. Աշխատանքից ազատվելը կատարվում է յերկու անգամից — ծննդաբերութունից առաջ և հետո:

6. Վիժելու ղեպքում աշխատանքից ազատվում են,

1-ից մինչև 2 ամսական հղիները	10 օրով:
3 » » 5 » »	20 »
5 » » 7 » »	30 »

Ժամնոթուլթյուն: Այս իրավունքից ոգտվում են այն բանվորուհիներն ու ծառայող կանայք, վորոնց վիժումը պատահամբ է առաջացել, կամ՝ կատարվել է արհեստական կերպով ապահովագրական գանձարկղի և արհեստական կերպով ապահովագրական հիմնարկութունների բըխորհրդային ծննդաբերական հիմնարկութունների բըժիշկների նախնական թույլտվութեամբ:

7. Բժշկի կողմից ստորագրված և համապատասխան նկատողութուններ պարունակող բյուլլետենն յուրաքանչյուր հիվանդ ներկայացնում է գործկոմին, տեղկոմին կամ հիմնարկութեան վարչութեան ի տեղեկութուն: Այնուհետև հիմնարկութեան վարչութունը բյուլլետենի միջնադրում է, թե բանվորը վճիր կատեգորիային է պատկանում, նրա տարիֆային վարձը, բավարարման ուրիշ տեսակները (հաշվապահութեան տվյալներով) և թե նա վճիր ժամանակամիջոցի համար է բավարարվում և թե նա վճիր ժամանակամիջոցի համար է ստորագրված լինի ված ոտճիկով: Այս բոլորը պետք է ստորագրված լինի գործկոմի-տեղկոմի պատասխանատու քարտուղարի կամ անդամի կողմից և համապատասխան կնիքով դրոշկամ

մած: Դրանից հետո զրամ ստանալու համար, հիվանդը ներկայացնում է ապահովագրական գանձարկղին կամ նրա բաժանմունքին և կարիք չեղած դեպքում, ստանում նոր բյուլետեն: Այս նոր բյուլետենն էլ նույնպես զբոսվում և հաստատվում է, ինչպես բժշկի, նույնպես և գործ-տեղ-կոմի կողմից:

8: Մեկ ամիս անընդհատ հիվանդությունից հետո կամ յեթե պարզվում է, վոր աշխատանքի անընդունակությունը ակոզական բնույթ է կրում, բժիշկն այդ դեպքում ուղարկում է հիվանդին բժշկական հսկիչ հանձնաժողով*):

9. Հիվանդության առթիվ արձակուրդ ստանալու համար հանձնաժողովին պետք է ներկայացնել.

ա) բժշկական յենթաբաժնի բժշկից վկայական, ինչինչ հիվանդություն է, վոր որից և բժշկվում, հիվանդության կարճ պատմությունն և դրուսությունը:

բ) յեղած քիմիական — բակտերիոլոգիական բնույթով յուլաները:

գ) վկայական, թե հիվանդն ուղարկված և տեղկոմից կամ գործկոմից:

Ծանոթություն: Այն հիվանդները, վորոնք հանձնաժողովին ներկայացնում են միայն մասնավոր բժիշկների ու գործկոմի կամ առդկոմի վկայական, քննության չեն յենթարկվում:

10. Աշխատանքից ազատել կարելի է մեկ ամսից վոչ ավելի:

Ծանոթություն: Առանձին դեպքերում, յերբ բը-

*) Այս կարգադրությունը պատկած հիվանդներին չի վերաբերվում:

բժշկական հսկիչ հանձնաժողովն անհրաժեշտ է գտնում ժամանակամիջոցն ավելացնելու, այդ մասին խնդիր և հարուցանում ապահովագրական գանձարկղի նախագայություն առջև:

11. Այն դեպքում, յերբ աշխատանքի անընդունակության պատճառով ապահովագրվածը գործից ազատվում է միայն յերեք որով, նրան բյուլետեն չի տրվում, իսկ նրան նպաստ տալիս է ծառայած տեղի վարչությունը հասանելիք ոտճիկի չափով: Այս դեպքում պետք է ներկայացնել բժշկից և գործկոմի կամ տեղկոմի կողմից վավերացված վկայական:




Յ Ա Ն Կ

Տերես

1. Ժողովից առաջ	3
2. Դանելյանի զեկուցումը	4
3. Բանվորների դերն ու դրուժյունը կապի- տալիստական հասարակութայն մեջ	5
4. Աշխատավարձի դերը ըանվորների կյան- քում	6
5. Աշխատավարձ կորցնելու պատճառներ	7
6. Հիվանդություն	10
7. Հաշմանդամություն	12
8. Գործազրկություն	13
9. Ծննդաբերություն	17
10. Ծերություն	17
11. Այրիություն և վորբություն	21
12. Բանվորների պայքարը Ռուսաստանում	21
13. Ի՞նչպես եին ապահովում ըանվորներին միապետութայն որով	22
14. Ժամանակավոր կառավարութայն որենք- ները	25
15. Բանվորների ապահովումը Խորհրդային Իշխանութայն որով	26
16. Ապահովագրական գանձարկիներ	28
17. Գանձարկիների կազմությունը	28
18. Գանձարկիների ղեկավարությունը	29
19. Ո՞վ և մասնակցում գանձարկիին	30
20. Ո՞վ և վճարներ տալիս գանձարկիին	30
21. Ի՞նչպիսի նպաստներ են տալիս գանձար- կիները	31
22. ա) Նպաստ հիվանդութայն պատճառով	32

23. ր) Հիւլանդութեան պատճառով արձակուրդի նպատակ	35
24. գ) Նպատակարաններու ատօմով	37
25. դ) Նպատակը ընտանիքի հիւլանդ անդամին խնամելու համար	38
26. ե) Նպատակ հիւլանդութեան ու ծննդարարութեան ատօմով	40
27. զ) Նպատակ նորածնի ծախսերը հոգալու համար	42
28. ե) Նպատակ նորածնին կերակրելու համար	44
29. ը) Նպատակ թաղման համար	45
30. թ) Կենսաթոշակ ինվալիդութեան դեպքում	46
31. ժ) Կենսաթոշակ մեռածի կամ անհետ կորածի ընտանիքի անդամներին	52
32. ի) Նպատակ գործազուրկներին	55
33. Ապահովագրական գանձարկիներն ու բժշկական օգնութիւնը բանփորներին	66
34. Մտքերի փոխանակութիւնն	69
Հավելում	
35. Բժշկական օգնութեան տեսակները	73
36. Բժշկական օգնութեան ապահովագրածի ընտանիքի անդամներին	73
37. Յերթեկեկ հիւլանդներու բժշկելու կանոններ	74
38. Տանը բժշկական օգնութեան ստանալու կանոններ	75
39. Հիւլանդանոցի կանոններ	76
40. Դեղ ստանալու կարգը	77
41. Ժամանակավորապէս աշխատանքի անընդունակ ապահովագրածներին գործից ազատելու կարգը	78



ԳԻՆՆ Ե 30 ԿՈՊ.

H ԱՐՄ
Զ-40

2013

« Ազգային գրադարան »



17/04
NL0051153

